Azg Ազգ

1 ՄԱՐՏ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ 35 (4654)

ISSN: 1829-1651

Մուբարաքին արգելել են լքել երկիրը, Քադդաֆիի մուտքը ԵՄ արգելված է

Եգիպտոսի դատախազությունը ընդունել է որոշում՝ արգելել նախկին նախագահ Հոսնի Մուբարաքի եւ նրա ընտանիքի անդամներին լքել երկիրը «նախաքննության ընթացքում»: Բացի սրանից՝ սառեցվել են Մուբարաք ընտանիքի ունեցած բոլոր ֆինանսական հաշվեհամարները: Հիշեցնենք՝ հունվարին Եգիպտոսում իրականացված հեղափոխության հետեւանքով 30 տարի իշխող Հոսնի Մուբարաքը հրաժարական տվեց: Իսկ մյուս «հեղափոխական» երկրի՝ Լիբիայի առաջնորդ Մոամմար Քադդաֆին ու նրա ընտանիքը այսուհետեւ չեն կարող մուտք գործել Եվրոմիության տարածք: Այս մասին որոշում է ընդունել ԵՄ կառավարությունը՝ արգելելով նաեւ զենք եւ «հատուկ սարքավորումներ» վաճառել կամ փոխանցել Լիբիային: Այս մասին տեղեկանում ենք BBC-ից:

Հ. Ա.

ՏԱՐԵԼԻՑ

Աշխարհի հայությունը ոգեկոչում է սումգայիթյան ցեղասպանության զոհերի հիշատակը

Բեռլինում

ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԽՍՀՄ իշխանությունների լուռ հայացքի ներքո 1988 թ. փետրվարի 27-ին, ադրբեջանական իշխանությունների կազմակերպմամբ, Բաքվից 20 կմ հեռու գտնվող Սումգայիթ քաղաքում սկսվեց հայ բնակչության բնաջնջումը: Փետրվարի 29-ին ուշացումով Սումգայիթ մտավ խորհրդային բանակը, սակայն քաղաքում հայ չէր մնացել: Միջազգային հանրությունը որեւէ կերպ չարձագանքեց Ադրբեջանի կատարած ոճրագործությանը, եւ Ադրբեջանի իշխանությունները պետական մակարդակով շարունակեցին իրենց մարդասպան գործողություններն, ու 1990-ին հունվարի տեղի ունեցան Բաքվի կոտորածները, իսկ 1992-ին՝ Մարաղայի կոտորածները:

1988-1994 թթ. Ադրբեջանում հայերի զանգվածային ջարդերի հետեւանքով վտարանդի դարձավ Ադրբեջանի ողջ հայկական համայնքը՝ կես միլիոն մարդ: Կոտորածները պատասխան էին Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության խաղաղ ցույցերի, որոնք Բաքվի իշխանություններին էին դիմում իրականացնելու ինքնորոշման իրենց սահմանադրական իրավունքը միանալու Խ. Հայաստանին:

Երեկ, սումգայիթյան ջարդերի 23-րդ տարելիցին ոգեկոչման միջոցառումներ ու բողոքի երթեր են տեղի ունեցել աշխարհի բազմաթիվ երկրներում:

Տես էջ 2

Այվազովսկու գլուխգործոցը գտնվեց

Արվեստաբան Շահեն Խաչատրյանը գողացված կտավը հայտնաբերեց Մոսկվայի աճուրդատանը

Օրերս արվեստաբան Շահեն Խաչատրյանի միջոցով մեզ հայտնի դարձավ, որ Մոսկվայում գեղարվեստական գործերի «Գելոս» աճուրդատանը փետրվարի 26-ին վաճառքի է դրվելու Հովհաննես Այվազովսկու «Փոթորիկ ժայռոտ ափերին» (1875 թ., կտավ յուղաներկ, 73 102 սմ) հրաշալի նկարը, որը 1990-ին անհայտ պայմաններում գողացվել էր Հայկական մշակութային կապերի ընկերության (ԱՕԿՍ) դահլիճից: Ուրբաթ գիշեր ՀՀ կենտրոնական ֆինչական վարչության աշխատակիցների հետ Մոսկվա՝ աճուրդի հետքերով ուղեւորվելուց առաջ արվեստաբանը պատասխանեց «Ազգ»-ի հարցին, թե ինչո՞ւ կարելի է կանգնեցնել նկարի վաճառքը.

- Նախ ասեմ, որ 21 տարի առաջ գողացված այդ նկարը Երեւան էր եկել 1957-ին ֆրանսահայ հայտնի նկարահավաք Աբրահամ Զինջյանի նվիրաբերած Այվազովսկու այլ նկարների հետ միասին, եւ ուղարկվել էր Ֆրանսահայ երիտասարդաց միության (ԺԱՖ) կողմից որպես նվեր ԱՕԿՍ-ին: 1983-ին ես պատրաստել էի Այվազովսկու նվիրաբերված բոլոր գործերի գունավոր սլայդները, որոնք օգտագործեցի տպագրելու Մոսկվայում, Սամարայում եւ Երեւանում լույս տեսած իմ պատկերագրքերում: Նշեմ նաեւ, որ 1990-ից հետո լույս տեսած գրքերում «Փոթորիկ ժայռոտ ափերին» նկարի անվանման կողքին ներքին մղումով հարմար գտա ավելացնելու, որ այն գողացվել է ԱՕԿՍ-ից: Այդ պատկերագրքերը, որոնք լույս են տեսել հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն եւ անգլերեն, տարածվելով զանազան երկրներում, գողոնի հայտնաբերման համար կարող էին օգտակար դեր ունենալ: Այժմ էլ դրանք կօգնեն դիմելու «Գելոս» աճուրդատանը՝ կանգնեցնելու վաճառքը: Կհավաքվեն եւ կուղարկվեն նաեւ ոստիկանության գրանցումները:

Այվազովսկու կտավի լուսանկարը մինչեւ գողանալը

Տես էջ 2

Հայտարարություն

Մարտիմեկյան ողբերգության հերթական տարելիցի այս օրը Արմենական-Ռամկավար Ազատական կուսակցությունը զոհերի հարազատների հետ միասին սգում է նրանց կորուստը:

Չնայած տարիների թավալին, այդ հանցագործությունը մնում է չբացահայտված, հիմնական մեղավորները չպատժված, իսկ որոշ քաղաքական ուժեր շարունակում են այդ ողբերգությունը սեփական քաղաքական նպատակահարմարությամբ օգտագործելու անընդունելի պրակտիկան:

Մարտիմեկյան ողբերգությունը, այլ հարցերի հետ միասին, բացահայտեց նաեւ հայրենի ոստիկանության արհեստավարժության ցածրակարգությունը, երբ ընդամենը մի քանի ժամ տեւած բախման հետեւանքով մեկ տասնյակ մարդ զոհվեց: Իրադարձությունների նման ելքը առավել տարօրինակ է վերջին ամիսներին եվրոպական մի շարք երկրներում՝ Հունաստանում, Իսպանիայում, Ֆրանսիայում տեղի ունեցած բազմահազարանոց ցույցերի եւ ոստիկանության հետ կապված բախումների ֆոնի վրա, երբ նման բախումներն ու ցույցերը զոհերի չեն հանգեցնում: Դա առաջին հերթին վկայությունն է այդ երկրների ոստիկանության բարձրակարգ պրոֆեսիոնալիզմի եւ այն պատասխանատվության, երբ նրանք, անկախ իրավիճակից, առաջին հերթին կարեւորում են քաղաքացիների կյանքի իրավունքը, մի բան, որը իսպառ բացակայում էր մեր ոստիկանության մոտ:

Ինչ դասեր են այդ ամենից քաղել երկրի վարչակազմը եւ ոստիկանությունը, արդյոք մենք աղաղակվա՞ծ ենք հետագայում նման իրադարձություններում ողբերգական նմանօրինակ ելքերի կրկնությունից: Սա մի հարց է, որը մինչ օրս կարոտ է պատասխանի:

ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱԿ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ալիեւը Սոչիից չի՞ փախչի

Այս շաբաթավերջին՝ մարտի 5-ին, դեռեւս Բաքվում ԱՄՆ դեսպան, ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի նախկին համանախագահ Մեթյու Բրայզայի տեղեկացմամբ, Սոչիում տեղի կունենա Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների եռակողմ հանդիպումը՝ ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի տրամաբանության մեջ:

Այս հանդիպմանը նախորդած սանկտպետերբուրգյան երկկողմ հանդիպումը Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների մասնակցությամբ, գազի գինն այս տարի բարձրացվելու հեռանկարից ազատելուց բացի, անվերապահորեն վերաբերում էր նաեւ ղարաբաղյան խնդրին, թեեւ այդ մասին որեւէ տեղեկություն չի փոխանցվել, բացի ընդհանրական ձեւակերպումներից:

Այդուհանդերձ, տարբեր գնահատականների համաձայն, Սոչիում կայանալիք հանդիպումը նախ եւ առաջ փորձ կլինի նվազեցնելու ղարաբաղյան հակամարտության գոտում սրվող լարվածությունը: Իսկ որ տարածաշրջանում Ադրբեջանի հիստերիայի ու ռազմատենչ հայտարարությունների, նաեւ շփման գծում հաճախակիացած միջադեպերի ֆոնին այդ լարվածությունը կարող է պայթյունի վերածվել, չի կարող չմտահոգել ու քննարկման առարկա չդառնալ:

Մյուս կողմից, Ադրբեջանի դրսեւորած վարքագիծը արդեն բանակցությունների սեղանի շուրջը որեւէ կերպ չի կարող, անգամ ամենալավատես միջնորդներին, հիմք դառնալ կարծելու, թե Սոչիի հանդիպումը կարող է որեւէ կերպ տարբերվել նախորդներից: Թերեւս միակ տարբերությունը կարող է դառնալ այն, որ Ադրբեջանի նախագահ Ալիեւ կրսերը չի փախչի այնպես, ինչպես վերջին մի քանի նախապատրաստությունների պարագայում:

Ա. Հ.

Նալբանդյանը ելույթ կունենա ԵԱՀԿ մշտական խորհրդի նիստում

Այսօր՝ մարտի 1-ին, Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը երկօրյա պաշտոնական այցով կմեկնի Վիեննա, որտեղ նախատեսված են նրա հանդիպումները Ավստրիայի գործադիր եւ օրենսդիր իշխանությունների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ:

Ինչպես տեղեկացնում են ՀՀ արտգործնախարարությունից, Ավստրիայի մայրաքաղաքում Էդվարդ Նալբանդյանը հանդիպում կունենա նաեւ ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Մարկ Պերեն դե Բրիշամբոյի հետ եւ ելույթ կունենա ԵԱՀԿ մշտական խորհրդի նիստում:

Մարտի 3-ին նախարար Նալբանդյանը Բրատիսլավայում կմասնակցի Վիշեգրադյան քառյակի եւ ԵՄ Արեւելյան գործընկերության ծրագրի անդամ երկրների արտգործնախարարների հանդիպմանը:

Ա. Հ.

Մարի Յովանովիչ. «Պետք չէ համեմատել ԼՂ-ի եւ Կոսովոյի հակամարտությունները»

«Կարո՞ղ եք գոնե մեկ տարբերություն նշել Լեռնային Ղարաբաղի եւ Կոսովոյի հակամարտությունների միջեւ: Եթե նման տարբերություններ չկան, ինչո՞ւ է միջազգային հանրությունը ճանաչում Կոսովոյի ինքնորոշումը, իսկ Ղարաբաղինը՝ ոչ: Մի՞թե օրենքի եւ պատմական արդարության առաջ բոլոր ժողովուրդները հավասար չեն», ԵՊՀ-ում տեղի ունեցած հանդիպման ժամանակ «**Ազգ**» օրաթերթի հարցին ԱՄՆ դեսպան Մարի Յովանովիչն ասաց, որ յուրաքանչյուր հակամարտություն առանձնահատուկ է եւ իր բնույթով եզակի:

Դեսպանի ներկայացմամբ՝ Կոսովոն գտնվում է ՄԱԿ-ի պաշտպանության ներքո, իսկ ԼՂ-ն՝ ոչ: «Այդ երկու հակամարտությունները տարբեր են: Ես ուզում եմ ասել, որ ամեն մի հակամարտություն, ամեն մի բանակցություն առանձնահատուկ են՝ ելնելով պատմական առանձնահատկություններից, ի հայտ գալուց եւ այլն: Բանակցողների համար առավել կարեւոր է այն, որ պետք չէ ֆիքսվել այն բանի վրա, թե այս խնդիրը շատ նման է Կոսովոյին, պետք է վերցնել Կոսովոյի մոդելը: Դա իրական խնդրից ուշադրությունը շեղում է: Պետք չէ համեմատել ԼՂ-ի ու Կոսովոյի հակամարտությունները», ասաց դեսպանը:

Յովանովիչի կարծիքով՝ ԼՂ խնդիրը միայն քաղաքական լուծում կարող է ունենալ, ճիշտ ուղին բանակցությունն է: «Բանակցություններ, որի պարագայում կլինեն փոխզիջումներ Հայաստանի եւ Ադրբեջանի ժողովրդի կողմից: Եթե երկու երկրները չկարողանան պաշտպանել լուծումը, ապա դա չի կարող տեւական լինել»:

Դեսպանի գնահատմամբ՝ լուծման այդ տարբերակը բխում է Հայաստանի, Ադրբեջանի ու հատկապես ԼՂ ժողովրդի շահերից:

«Թե ինչու հանդիսանալով միջազգային իրավունքի սուբյեկտ, Ադրբեջանը հաճախ է ուժի սպառնալիք կիրառում, սակայն միջազգային հանրության կողմից համարժեք պատասխան երբեք չի ստանում», հարցին էլ պատասխանեց, որ եթե սենյակում Ադրբեջանի որեւէ ներկայացուցիչ ներկա լիներ, ապա նա էլ կասեր, թե Հայաստանն է միջազգային իրավունքի նորմերը խախտում, միջազգային հանրությունն էլ չի պաշտպանում միջազգային իրավունքը:

«Միջազգային հանրությունը փորձում է կամուրջ գտնել կողմերի միջեւ, որպեսզի կարողանանք գնալ դեպի խաղաղ կարգավորում: ԵԱՀԿ Մինսկի խումբը շատ ակտիվ աշխատում է այդ կամուրջը գտնելու ուղղությամբ: Մենք չենք կարծում, որ այդ խնդիրը կարող է ռազմական լուծում ունենալ: Միակ ճանապարհը խաղաղ բանակցություններն են»:

Հ. Հ.

Փոփոխությունները Եգիպտոսի ներսում են

Այդ երկրի արտաքին քաղաքական կուրսը կպահպանվի

Հայաստանում Եգիպտոսի դեսպան **Վահիդ Գալալը** որոշ ժամանակ անց կավարտի իր դիվանագիտական առաքելությունը մեր երկրում: Երեկ Մամուլի ազգային ակումբում դեսպանը, ընդգծելով երկու երկրների «լավ կապերում» Եգիպտոսի հայ համայնքի գործոնը, որը, ըստ դիվանագետի, «լուրջ մասնակցություն ունի նաեւ Եգիպտոսի ներքին կյանքում», նշեց, որ ինքը Երեւանից կհեռանա «լավ տպավորություններով»: Բնականաբար՝ դեսպան Գալալը հիմնականում խոսեց հեսհեղափոխական Եգիպտոսի իրավիճակից: Շեշտելով, որ արաբական այդ երկրում իրականացված հեղափոխությունը «արտաքին հրահրանքի» կամ «կրոնական որեւէ ուղղության պահանջ» չէր, այլ ներքին ցանկություն, եւ «շատ կարեւոր է, որ առանց ավելորդ արյունահեղությունների ավարտվեց», դեսպանը նկատեց, որ Եգիպտոսում կատարվածը ոչ թե անհատի, այլ ռեժիմի փոփոխություն էր. «Եգիպտոսի՝ ժողովրդավարություն սիրող ժողովրդի շնորհիվ մեր երկիրը թեւակոխել է իրական ժողովրդավարացման շրջան», շեշտեց դիվանագետը:

Վահիդ Գալալը նաեւ նշեց, որ, փաստորեն կատարվել են ցուցարարների կարեւորագույն պահանջները, որոնցից առաջինը նա առանձնացրեց երկրում սահմանադրության որոշ դրույթների փոփոխությունը. «Ըստ ստեղծված հանձնաժողովի ներկայացրած սահմանադրական փոփոխությունների՝ այսուհետեւ նախագահը կընտրվի ոչ թե 6, այլ 4 տարի ժամկետով, եւ նույն անձն ավելի, քան երկու անգամ անընդմեջ չի կարող դառնալ նախագահ», նշեց դեսպանը:

Երկրորդ կարեւոր պահանջը, որը ներկայացրել էին եգիպտացի ցուցարարները, երկրի պառլամենտի գրումն էր, որը եւս իրականացվել է, եւ երրորդը՝ հակակոռուպցիոն պայքարի ուժեղացումը. «Հենց այս պայքարի շրջանակներում երկրում կալանավորվեցին մի շարք պաշտոնյաներ», նշեց դեսպանը:

Ինչ վերաբերում է հեղափոխությունից հետո Եգիպտոսի արտաքին քաղաքականության հնարավոր փոփոխություններին, ապա դեսպան Գալալը հիշեցրեց նախագահ Մուբարաքից հետո երկրի ղեկավարությունը ստանձնած Ռազմական գերագույն խորհրդի ղեկավարի խոսքերը. «Եգիպտոսի՝ նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունները չեն կասեցվի կամ փոփոխվի»: Կոնկրետ Կահիրե-Վաշինգտոն հարաբերությունների առնչությամբ դեսպան Գալալը նկատեց. «ԱՄՆ-ը մեզ համար բարեկամ երկիր է, եւ սա փոխշահավետության վրա հիմնված գործակցություն է: Մեր հարաբերությունները նաեւ հիմնված չեն կոնկրետ անհատների վրա, դա երկու պետությունների գիտակցված քաղաքականություն է»: Սրանով եգիպտացի դիվանագետը նաեւ թերեւս հիմնավորեց այն ենթադրությունները, որ որեւէ լուրջ փոփոխության չեն ենթարկվի Եգիպտոսի հարաբերությունները Իսրայելի հետ:

Իսկ Հայաստանի հետ հարաբերությունների մասով դեսպանը նկատեց, որ չնայած երկկողմ քաղաքական գործակցությունը «շատ լավ է», տնտեսականը, սակայն, որոշակիորեն չի համապատասխանում երկու պետությունների իրական ներուժին ու ցանկություններին: «Կարծում եմ՝ սրա պատճառն այն է, որ մեր երկրների գործարարները մանրամասն իրազեկված չեն միմյանց շուկաներից, բացի դրանից՝ չկա հստակ գործող տրանսպորտային ճանապարհ Հայաստանից Եգիպտոս», նկատեց դեսպանը: Վերջում դիվանագետը, շեշտելով, որ այսօր Եգիպտոսի ներքին իրավիճակը բավականին կայուն է, նշեց, որ Երեւան-Շարմ էլ Շեյխ ուղիղ չվերթերի սառեցման անհրաժեշտությունն այլեւս չկա:

Հ. ԱՓՅԱՆ

Արդարադատության նախարարին ոչ ոք չդիմավորեց

Երեկ առավոտյան՝ 9.00-ից 9.30-ի սահմաններում, արդարադատության նախարար Հրայր Թովմասյանն այցելել է Կենտրոն եւ Նորք-Մարաշ ՔԿԱԳ տարածքային բաժին: Թեպետ բաժնի մուտքի մոտ փակցված էր, որ աշխատանքները սկսվում են ժամը 9-ից, սակայն դուռը փակ էր եւ աշխատակիցներից որեւէ մեկը աշխատանքի չէր ներկայացել: Համաձայն քաղաքացիական կացության մասին օրենքի 78-րդ հոդվածի՝ ՔԿԱԳ մարմինների գործունեությունը կազմակերպում է այն համայնքի ղեկավարը, որտեղ գտնվում են համապատասխան կառույցները: Իսկ ՔԿԱԳ մարմինների գործունեության մեթոդական ղեկավարումն ու վերահսկողությունն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարությունը: Նույն օրենքի պահանջով կարեւոր է տեղական ինքնակառավարման եւ իրավասու այլ մարմիններին առաջարկություններ ներկայացնել ՔԿԱԳ մարմնի ղեկավարներին կամ աշխատողներին կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ: Նախարարը դիմել է Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանին՝ քննարկելու վերոնշյալ բաժնի աշխատակիցներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Հ. Հ.

Այվազովսկու գլուխգործոցը գտնվեց

1-ին էջից

Ավելացնեմ նաեւ հետեւյալը: Տարիներ առաջ, Սոթբիսի աճուրդատանը պատահաբար ծանոթացա Լոնդոնում վաճառվող գործերի կատալոգին եւ հանկարծ տղված տեսա տարիներ առաջ մեր պատկերասրահից գողացված Լեւիտանի բնանկարը: Ինձ ուղեկցող բարեկամս՝ Անդրանիկ Շահինյանն, ասաց. «Եթե վստահ ես, պետք է հեռագիր տանք, որ աճուրդը կանգնեցվի: Նաեւ շատ պետք է Լոնդոն ուղարկվի ոստիկանության գրանցումները: Այդ դեպքում միայն, եթե վաճառողը չպատասխանի, թե ումից է գնել, նկարն այլեւս չի դրվի վաճառքի»: Երեւանից, պահանջվող գրանցումները, մշակույթի նախարար 3. Մելիք-Օհանջանյանի օգնությամբ, Լոնդոն հասցրեց Սարյան թանգարանի իմ տեղակալ Լուսիկ Միրզոյանը եւ... մեր ուրախությունն իրականացավ:

Հասկանալի պատճառներով գողացված նկարի հայտնաբերման մասին ոչինչ չէինք հրապարակել, սպասելով հայկական «միսիայի» հաջող ավարտին...

Երեկ վերադառնալով Մոսկվայից, Շահեն Խաչատրյանը շարունակեց ուրբաթ օրը «Ազգի» խմբագրատանն սկսված հարցազրույցը.

Շահեն Խաչատրյանը՝ հայտնաբերված նկարի մոտ Մոսկվայում:

- Իսկ ի՞նչ արդյունք տվեց երեք օր առաջ Ձեր Մոսկվա գնալը:

- Մեր մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը շատ նուրբ մոտեցում ցուցաբերեց: Նախ, ինչպես իմացա, կազմվեց Մոսկվայի քննչական վարչության նախագահ Վ. Պետրակովին եւ շատ որոշեց ինձ էլ ուղարկել: Արդեն Մոսկվա էին հասել մեր կենտրոնական քննչական վարչության աշխատակիցներ Գայանե Երիցյանը (նույն գծով Մոսկվայում մասնագիտացած) եւ ղեկավար Գեւորգ Ազիզյանը: Նրանց մոտ էին պահանջվող գրանցումները ու համապատասխան ակտերը գողության մասին: Համոզիչ բացատրություններ տվեցին՝ ներկայացնելով նաեւ դանակով կտրված եւ գողացված կտավից մնացած շրջանակի լուսանկարները: Ինքս էլ տարել էի Այվազովսկուն նվիրված 5 գրքեր եւ ցույց տվի գողության մասին արածս բոլոր նշումները: Տեսանք նաեւ նկարը եւ մանրամասն բացատրեցի, թե ինչ կերպ է նկարը վերականգնվել եւ փակցվել նոր կտավի վրա, չափերն էլ փոխրացել՝ դարձել էին 70x100 սմ:

Երեկոյան հանդիպում տեղի ունեցավ Պետրակովի հետ եւ ուրախությամբ լսեցինք. «Մոլորեց ձեր մշակույթի նախարարը, մի քանի շաբաթ հետո Այվազովսկու նկարը կուղարկենք Երեւան»:

Մի հերթին չենք կարող «մոլորեց» չասել նաեւ Այվազովսկու հրաշալի մասնագետ եւ, ամենակարեւորը, մեր ազգային արժեքների պահպանմանը այդքան զգոն եւ անձնդիր հետեւող արվեստաբան Շահեն Խաչատրյանին: Կերպարվեստի բազմաթիվ գործերի հայտնաբերումը, դրանց մեկ մասի հայրենադարձումը կամ նվիրաբերումը պարտական ենք նրան:

Տպավորիչ է նաեւ ՀՀ մշակույթի նախարարության եւ համապատասխան վարչության արագ արձագանքումը:

Ավելացնենք, որ միջազգային աճուրդային տներում վերջին տարիներին Այվազովսկու նկարները գնահատվել եւ վաճառվել են 1-2,8 մլն ԱՄՆ դոլար...

ՏԱՐԵԼԻՔԸ ՀԱՅԱՇԽԱՐՀՈՒՄ

Աշխարհի հայությունը ոգեկոչում է սումգայիթյան ցեղասպանության զոհերի հիշատակը

1-ին էջից

«Ճանաչում» եւ «դատապարտում» կարգախոսներով Հայաստանի երիտասարդական հիմնադրամի անդամները բողոքի խաղաղ ցույց էին կազմակերպել ՄԱԿ-ի գրասենյակի առաջ՝ պահանջելով դատապարտել ադրբեջանցիների ծրագրած կոտորածները՝ հիշատակելով նյուռնբերգյան գործընթացները:

«Պահանջում ենք, որ միջազգային հանրությունն ու կազմակերպությունները դատապարտեն 1988-1990 թթ. հայերի դեմ իրականացված ցեղասպանությունն ու դրան տան քաղաքական գնահատական, քանզի դրա չդատապարտումը կծնի նոր ցեղասպանություններ», ասված է երիտասարդների կազմած հայտարարության տեքստում, որը նրանք հանձնել են ոչ միայն ՄԱԿ-ի գրասենյակ, այլեւս Հայաստանում գործող բոլոր դեսպանատներին:

Ադրբեջանի ջարդարարների ձեռքով ցեղասպանության ենթարկված հայ անմեղ զոհերի հիշատակին կիրակնօրյա պատարագ է մատուցվել Հալեպի բոլոր հայկական եկեղեցիներում: Հալեպի Սբ Աստվածածին եկեղեցում կատարվող պատարագին մասնակցել է նաեւ Հալեպում Հայաստանի գլխավոր հյուպատոս Աշոտ Մանուկյանը:

Անթիլիասի մայրավանքում Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի նախագահությամբ տեղի է ունեցել հոգեհանգիստ: Հանդիսության ժամանակ ելույթներով հանդես են եկել Լիբանանում Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարյանն ու կաթողիկոս Արամ Ա-ն:

Սումգայիթի զոհերի հիշատակը հարգել են նաեւ Հունաստանում: Աթենքում Ադրբեջանի դեսպանատան առաջ տեղի է ունեցել բողոքի ակցիա:

Սումգայիթի ողբերգական իրադարձությունների տարելիցը նշել են նաեւ Սանկտ Պետերբուրգում: Եկեղեցում մատուցվել է պատարագ՝ մասնակցությամբ Սանկտ Պետերբուրգում Հայաստանի գլխավոր հյուպատոս Վարդան Հակոբյանի: Պատարագի ավարտին Հայ առաքելական եկեղեցուն առընթեր կիրակնօրյա դպրոցի դահլիճում տեղի է ունեցել Սումգայիթի ջարդերի մասին ֆիլմի ցուցադրում:

Բողոքի ակցիաներ ու երթեր են կազմակերպվել նաեւ Գերմանիայում, Կանադայում, Լոս Անջելեսում, Վաշինգտոնում, Փարիզում, Թբիլիսիում, Հաագայում:

Կարմիր քարտ իշխանությանը

Երեկ Տիգրան Կարապետյանի հրավիրած հանրահավաքին մասնակցել են «Սարդարապատ» շարժումից Ժիրայր Սեֆիլյանը, Տիգրան Խզմալյանը, նախկին «Դարաբաղ» կոմիտեի անդամ Աշոտ Մանուչարյանը եւ այլք: Տ. Կարապետյանը կոչ արեց հանրահավաքայիններին՝ բարձրացնել ձեռքում եղած կարմիր քարտերը, որովհետեւ ավելի վաղ Կարապետիչը խոստացել էր ցույց տալ իշխանություններին. «Բարձրացրեք քարտերը, որ տեսնեն՝ ճանապարհները փակելով չէ», ասաց նա: Տարբեր տեղեկություններով՝ մարզերից եկող ճանապարհներն, իրոք, առավոտյան փակվել էին, չգիտեմ՝ իսկապես, թե որքեսզի ամբողջանա՞ Կարապետիչի ընդդիմադիր իմիջը: Կարապետիչն ավելի շատ խոսեց իր անցկացնելիք հաջորդ՝ մարտի 21-ի հանրահավաքի եւ մարտի 1-ի զոհերի հիշատակի մոմավառության մասին:

Մ. Խ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռարձակութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Կարծիք

Տաք իրավիճակ Ազգային ժողովում

«Ժառանգության» բոյկոտը»

Ազգային ժողովի երեկ սկսված նիստի սկզբում «Ժառանգություն» խմբակցության ղեկավար **Ռաֆֆի Հովհաննիսյանն** իր ելույթում նկատեց, թե ԱԺ օրակարգը չի արտացոլում Հայաստանի քաղաքացիների պահանջները՝ նա նկատի ուներ հայ-թուրքական արձանագրությունները, որոնց նկատմամբ ԱԺ-ն, ըստ ղեկավարի, պետք է վերաբերմունք դրսևորի: Իսկ արդեն անդրադառնալով վերջին կոալիցիոն հուշագրին՝ Ռ. Հովհաննիսյանն այն անվանել է հակահրավական եւ հակասահմանադրական: Ըստ նրա՝ պետական իմքնիշխանությունն ու ազգային շահը զիջող քաղաքականությունն այդ հուշագրի տրամաբանությամբ շարունակվելու է եւս 7 տարի, այդ թվում՝ արտգաղթը, անարդարությունը, անօրինականությունը խթանող ներքին քաղաքականությունը: Ըստ Հովհաննիսյանի՝ կեղծված ընտրությունների արտացոլանք խորհրդարանի տեղերը չեն բավականացնում մեծամասնության կուսակցապետների ախորժակը, ու նրանք իրենց հայացքն ուղղել են սակավաթիվ ընդդիմադիր աթոռներին:

Ձանգ հնչեցնելով՝ նրան ընդհատեց եւ հակադարձեց ԱԺ փոխնախագահ **Սամվել Նիկոյանը**, նկատելով, որ Ռ. Հովհաննիսյանը ճիշտ չի ընկալել հուշագիրը: Ռ. Հովհաննիսյանը շարունակում էր խոսել անջատված խոսափողից. «Առեք, կերեք, սա է ձեր «Ժառանգությունը», ասաց նա: Ազգային ժողովի նախագահ **Հովիկ Աբրահամյանը** եւս արձագանքեց, ասելով, թե հայ-թուրքական արձանագրությունները Հայաստանի նախագահը սառեցրել է, Ազգային ժողովը լիազորություն չունի դրանք քննարկելու. «Կարելի է ասել, որ մենք այդպիսի հարց չունենք», նկատեց նա:

Ռ. Հովհաննիսյանի ելույթից հետո «Ժառանգության» ղեկավարները դուրս են եկան դահլիճից, դրանից հետո ՀՅԴ-ն 20 րոպե ընդմիջում վերցրեց՝ պարզություն մտցնելու համար իրավիճակում: 20 րոպե ընդմիջումը լրանալուց հետո Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը հայտարարեց, թե «Ժառանգություն» խմբակցության եւ վարչության ժողով է հրավիրելու՝ որոշելու համար իր հետագա պահելաձեւը: Անգամ խոսքն այն մասին էր, թե «Ժառանգությունը» կարող է հրաժարվել մանդատներից՝ կոալիցիոն հուշագրի ջգրու:

Այստեղ ընդամենը հիշեցնենք, որ «Ժառանգությունը» կրկնում է ինքն իրեն, քանի որ տարբեր առիթներով մի երկու անգամ այսպիսի իրավիճակ ստեղծել է Ազգային ժողովում: Երեկոյան, նիստի ավարտին դեռ «Ժառանգության» որոշման մասին ոչինչ հայտնի չէր:

Երեկ քննարկվող օրինագծերից կարելի է առանձնացնել Ժամանակավոր անաշխատունակության օրենքում նոր փոփոխությունը, որն, ըստ սոցիալական հանձնաժողովի նախագահ **Հակոբ Հակոբյանի**, հոկտեմբերի 27-ին ընդունված եւ դեկտեմբերի 1-ից ուժի մեջ մտած նույնանուն օրենքում թույլ տրված սխալն է ուղղում, երբ բարձր աշխատավարձ ստացող հղի կանանց 10 տոկոսը միայն չփոխհատուցված էր մնալու: Իսկ ըստ ԱԺ փոխնախագահ Սամվել Նիկոյանի՝ նոր փոփոխությունը լավ օրից չէ, քանի որ նախկինում օրենքը սողանցք ուներ, եւ գործատուներն այդ սողանցքն օգտագործելով՝ մեծ գումարներ էին ֆիքսում եւ վնաս տալիս բյուջեին, այդ պատճառով օրենքով վարձատրության շեմ սահմանվեց: Սակայն գործողության մեջ է երեւում օրենքի թերությունը, եւ հիմա կառավարությունն ուղղում է իր սխալը, անգամ **Էռնեստ Սողոմոնյանը** դեմոգրաֆիկ նշանակություն տվեց այս փոփոխությանը: Սակայն խորհրդարանական ընդդիմությունը ներկայացնող **Արծվիկ Մինասյանը** այս նոր առաջարկում էլ թերություններ գտավ, նշելով, որ կառավարությունը նախ մի վատ օրինագիծ է բերում, հետո ուղղում այն՝ իբր հասարակության դիմադրողականությամբ բարելավում է: Նա մտահոգություն ուներ, որ կինը կարող է վնաս կրել 140 օրվա հաշվարկում, քանի որ հստակեցված չէ՝ այդ հաշվարկը հնգօրյակի, թե վեցօրյակի վրա է հիմնվում, վերջին դեպքում կինը տուժում է: Այսպես թե այնպես՝ հղիների իրավունքներով զբաղվողները հասան իրենց նպատակին, եւ այս նոր փոփոխությամբ առավել նորմալ պայմաններով է բարձր աշխատավարձ ստացող հղի կինը գնում ֆիզարձակուրդ:

Ի դեպ, երեկ, օրվա վերջում, նկատելով ԱԺ համարյա դատարկ դահլիճը, Հովիկ Աբրահամյանը բավական բորբոքված տոնով դիտողություն է արել պատգամավորներին. «Եվ սա ի՞նչ աշխատանքի ոճ է՝ գալ 12:00-ին, քվեարկել ու գնալ: Ուրեմն սրանից հետո վարողները, 1-2 որ հետո, իհարկե, խմբակցությունների ղեկավարների հետ պայմանավորվելուց հետո, երբ հարցն ավարտվի, կազմակերպելու են քվեարկություն: Եվ, իմ կարծիքով, իրենք պետք է մտածեն իրենց ապագայի մասին, որ մեկ ամսվա ընթացքում 3-4 օր են գալիս նիստի, բայց այդ 4 օրն էլ չեն բարեհաճում գոնե դահլիճում 6 ժամ անցկացնել»:

Երեկ, ի դեպ, Ազգային ժողովի իններորդ նստաշրջանի սկզբում պատգամավորները մեկ րոպե լռությամբ հարգեցին սումգայիթյան զոհերի հիշատակը: «Այդ ողբերգական իրադարձությունները, որոնց զոհ գնացին բազմաթիվ մեր հայրենակիցներ, եւս մեկ անգամ ցույց տվեցին Ադրբեջանի իսկական դեմքը, ինչպես նաեւ ապացուցեցին, որ ցեղասպանությունները կարող են կրկնվել, քանի դեռ աշխարհը չի դատապարտել նման ոճրագործությունները», քառօրյան բացելով իր ելույթում ասաց ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Որքան էներգիա կարող ենք խնայել

Էներգաարդյունավետության ծրագրերի կիրառման շնորհիվ

Համաշխարհային բանկի խմբի մաս կազմող Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC)՝ Հայաստանում իրականացվող էներգախնայողության եւ էներգաարդյունավետության ծրագրի վերաբերյալ մամուլասենյակում երեկ ներկայացրեց ծրագրի ղեկավար Տիգրան Փարվանյանը: Նա նախ ներկայացրեց Հայաստանում էներգաարդյունավետության ներկա վիճակը:

Տիգրան Փարվանյանի ներկայացմամբ, կայուն էներգետիկայի ֆինանսավորումը կարեւոր է Հայաստանի համար, քանի որ մեր երկիրն այժմ ներկրում է իր էներգետիկ ռեսուրսների 2/3-ը, ջերմաէլեկտրակայանները չեն համապատասխանում միջազգային տեխնիկական, տնտեսական եւ բնապահպանական չափանիշներին, եւ չնայած բարենպաստ աշխարհագրական դիրքին եւ բնական ռեսուրսներին, վերականգնվող էներգետիկայի առումով Հայաստանը տուժում է ներդրումների պակասից: Ուստի ծրագրի նպատակն է հիմնել Հայաստանում էներգաարդյունավետության եւ վերականգնվող էներգետիկայի ոլորտում ներդրումների համար կայուն շուկա: Դրա համար IFC-ը մտադիր է աջակցել վերականգնվող էներգետիկայի ֆինանսավորման զարգացմանը, բարելավել օրենսդրական դաշտը, ստեղծել հարթակ՝ աջակցելու ֆինանսական հաստատություններին էներգաարդյունավետության վարկեր շուկա հանելու գործում, բարձրացնել այս հարցի նկատմամբ իրազեկումը:

2008-2009-ին Հայաստանի 100 ձեռնարկությունների ղեկավարների շրջանում IFC-ի անցկացրած հետազոտության համաձայն, հարցվողներից 72 տոկոսը նշել է, որ գործող օրենսդրությունը չի խթանում էներգաարդյունավետությունը: Միաժամանակ, մեր արդյունաբերության 5 ճյուղերը ներկայացնող (քիմիա, շինանյութերի արտադրություն, սննդարդյունաբերության, մետաղամշակում, մեքենաշինություն) ձեռնարկությունների միայն 48 տոկոսն է էներգաարդյունավետության բարձրացումը համարում բիզնես գերակայություն: Նրանք թերագնահատում են այդ ներուժը 70 տոկոսով: Այսինքն, ձեռնարկությունների ներկայացուցիչների կարծիքով, էներգաարդյունավետությունը միջինացված ցուցանիշով 7,7 տոկոսի խնայողություն կարող է տալ, մինչդեռ իրականում այդ ցուցանիշը 20 տոկոս կարող է լինել:

Տիգրան Փարվանյանը ներկայացրեց, թե ըստ կոնկրետ ճյուղերի որքան է էներգիայի ծախսի բաժինը արտադրական ծախսերի մեջ եւ որքան կարող է լինել էներգաարդյունավետության ծրագրերի իրականացման դեպքում: Այսպես, մեքենաշինության մեջ էներգիայի ծախսն ընդհանուր արտադրական ծախսերի 56 տոկոսն է, բայց հնարավոր է իջեցնել մինչեւ 11 տոկոսի, մետաղամշակման մեջ՝ 38 տոկոսն է եւ հնարավոր է իջեցնել մինչեւ 13 տոկոսի, շինանյութերի արտադրության մեջ՝ 23 տոկոս՝ կարելի է իջեցնել մինչեւ 11 տոկոս, քիմիայում՝ 33 տոկոս՝ կարելի է իջեցնել մինչեւ 16 տոկոս, սննդարդյունաբերությունում՝ 27 տոկոս, կարելի է իջեցնել մինչեւ 12 տոկոս: Էներգաարդյունավետության ծրագրերի իրականացման համար հարցվողների 41 տոկոսը համարել է սեփական միջոցների բացակայությունը, իսկ արտաքին ֆինանսավորման համար դիմել է միայն 17 տոկոսը:

Ամփոփելով՝ ծրագրի ղեկավարը հայտնեց, որ մարտի 10-12-ը Մոսկվայի տանը տեղի կունենա «Էներգաարդյունավետության էֆոպ 2011», որի նպատակն է զարգացնել այս շուկան, ցուցադրել էներգաարդյունավետության վերջին նմուշները, ամրապնդել արտադրող-սպառող կապերը:

Պատասխանելով «**Ազգի**» հարցին, թե ի՞նչ արդյունքների է հավակնում Հայաստանի կայուն էներգետիկայի ֆինանսավորման ծրագիրը, Տիգրան Փարվանյանն ասաց, որ մինչեւ 2015-ը ակնկալում են վերականգնվող էներգետիկայի արտադրման 35 մվտ նոր հզորությունների ստեղծում, տարեկան 120 գվտ/ժ վերականգնվող էներգետիկայի արտադրության աճ, ջերմոցային գազերի արտանետման տարեկան 70 հզ տոննա կրճատում եւ տարեկան 20 գվտ/ժ էներգախնայողություն:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ

Գարեգին Երկրորդ. «Վրաստան այցելության ժամանակ կբարձրացնենք վիրահայոց թեմին հուզող խնդիրները»

«Աշխատանքներ են իրականացվում, եւ փորձում ենք վրաց ուղղափառ եկեղեցու եւ իշխանության, նաեւ միջազգային տարբեր կառույցների ու կազմակերպությունների միջոցով հասնել այն ցանկալի արդյունքին, որ Վրաստանում հայկական եկեղեցիները պահպանվեն ու վերադարձվեն վիրահայոց հոգեւոր դասին», կիրակի Մայր աթոռում տեղի ունեցած հանդիպման ժամանակ «Ազգ» օրաթերթի հարցին պատասխանեց Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը:

Վեհափառը հույս հայտնեց, որ հայկական կողմի ջանքերը հաջողությամբ կպսակվեն ոչ միայն վիրահայոց թեմի գրանցման, այլեւ Վրաստանում գտնվող հայկական եկեղեցիների վերադարձման հարցում:

Վիրահայոց թեմից պահանջ է ներկայացվել Վրաստանի իշխանություններին՝ հետ ստանալու Վրաստանում գտնվող վեց հայկական եկեղեցիներ, որոնցից դրանք դառնան գործող եւ ծառայեն վիրահայոց թեմին: Այժմ թեմը սպասում է պատասխանի: Դրական պատասխանին կարող է նպաստել Գարեգին Բ կաթողիկոսի այցը Վրաստան, որն անընդհատ տարբեր պատճառներով ձգձգվում է: «Արդյոք նախատեսվո՞ւմ է Վրաստան եւ Ջավախք այցելություն այս տարի եւ քննարկվելո՞ւ է հայկական եկեղեցիների խնդիրը», հարցին ի պատասխան Վեհափառն ասաց, որ երկար սպասված Վրաստան այցելությունը տեղի կունենա այս տարի, սակայն ամսաթիվը դեռեւս հստակեցված չէ:

«Այցի ընթացքում տեղի կունենա հանդիպում վրաց եկեղեցու առաջնորդ Իլյա պատրիարքի հետ: Չի բացառվում, որ հանդիպումներ լինեն նաեւ երկրի պետական բարձրաստիճան այրերի հետ: Իհարկե, այդ հանդիպումների ժամանակ պետք է բարձրացնենք նաեւ վիրահայոց թեմին հուզող բազմաթիվ խնդիրներ, այդ թվում՝ եկեղեցիների վերադարձման», ասաց կաթողիկոսը:

Հ. Հ.

Դատարանների նախագահը՝ Վրաստանում դեսպան

Թե ինչ դերակատարություն ունի Վրաստանը Հայաստանի համար եւ ինչպիսին են հայ-վրացական հարաբերությունները միջպետական եւ զուտ Վրաստանի մակարդակով՝ առանձնակի ներկայացման կարիք չկա: Ու չնայած երկու կողմերն էլ կովկասյան կենցաղների ձեւով են խոսում, բայց գործում իրար չճանաչող ու չհասկացող երկու օտարերկրացիների նման, դժվար է դատողություններ անել, թե այդ հարաբերություններում ինչն է դիտարկվում գերակա եւ ինչպես են քայլեր իրականացնում թե՛ Հայաստանը, թե՛ Վրաստանը:

Հայաստանի նախագահի փետրվարի 26-ի հրամանագրով Հրաչ Սիլվանյանն ազատվել է Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանի պարտականություններից: Նախագահի մեկ այլ հրամանագրով Հովհաննես Մանուկյանը նշանակվել է Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան:

Հովհաննես Մանուկյանի կենսագրությունը ծագող հարցերին որեւէ կերպ չի համապատասխանում, ընդհակառակը, ստացվում է, որ նման կադրին տառացիորեն ուղարկում են Վրաստան: Հաշվի առնելով տարբեր զրույցներում ընդգծումները, թե հայ-վրացական հարաբերությունները, մասնավորապես՝ Վրաստանում Հայաստանի դեսպանատան աշխատանքն զգալի չափով առնչվում է իրավական հարցերի, թերեւս կարելի է հասկանալ իրավաբանի նշանակումը այդ պաշտոնում:

1999-2008 թթ. դատական համակարգում ամենաբարձր պաշտոններ զբաղեցրած Հովհաննես Մանուկյանը վերջին երկու տարում, ըստ ԱԳՆ տրամադրած կենսագրականի, ոչնչով չի զբաղվել, ասել է թե առժամանակ հեռու է պահվել պաշտոններ զբաղեցնելուց, սակայն ի վերջո նշանակվել է դեսպան:

Ա. Հ.

ԼՂՀ արտգործնախարարի հանդիպումները Վաշինգտոնում

Վաշինգտոն կատարած այցի շրջանակներում ԼՂՀ ԱԳ նախարար Գեորգի Պետրոսյանն այցելել է ԱՄՆ-ում ՀՀ դեսպանատուն, որտեղ աշխատակիցների հետ հանդիպումից հետո տեղի է ունեցել առանձնազրույց ՀՀ դեսպան Թաքուլ Մարգարյանի հետ: ԱԳՆ մամուլի ծառայությունից հայտնում են, որ դրանից հետո Գ. Պետրոսյանը հանդիպել է Ամերիկայի հայկական համագումարի գործադիր տնօրեն Բրայան Արդունիի եւ կազմակերպության աշխատակիցների հետ՝ քննարկել ԼՂ հակամարտությանն ու բանակցային գործընթացին, ինչպես նաեւ Սփյուռքի հայկական համայնքների կյանքին վերաբերող մի շարք հարցեր: Փետրվարի 26-ին Գեորգի Պետրոսյանը հանդիպում է ունեցել Վաշինգտոնի Հայ դատի գրասենյակի ղեկավար Արամ Համբարյանի հետ: Քննարկվել են ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում առկա իրավիճակին, Արցախի կյանքի տարբեր բնագավառներին եւ տարածաշրջանային խնդիրներին վերաբերող հարցեր: ԼՂՀ ԱԳ նախարարը ներկայացրել է ԼՂՀ պաշտոնական դիրքորոշումը մի շարք հարցերում: Գեորգի Պետրոսյանն այցելել է Սուրբ Մարիամ եւ Սուրբ Խաչ եկեղեցիներ, ներկա գտնվել պատարագին, այնուհետեւ՝ զրուցել հոգեւորականների ու հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Սբ. Խաչ եկեղեցում նախարարը հանդես է եկել ելույթով, որում հայ համայնքի անդամներին ներկայացրել է ԼՂՀ դիրքորոշումը ադրբեջան-ղարաբաղյան հակամարտության հարցում՝ նշելով ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի լուծման համար Հայաստանի, Սփյուռքի եւ Արցախի ջանքերի միավորման անհրաժեշտությունը: ԼՂՀ ԱԳՆ ղեկավարը պատասխանել է նաեւ հայ համայնքի անդամների հարցերին:

Հ. Ա.

Surtłhg

Ինձ հաճախ են հարցնում՝ վերջիվերջո Սումգայիթում քանի՞ հայ է սպանվել 1988 թ. փետրվարին: Ճշգրիտ թիվը մենք մինչեւ հիմա չենք պարզել: Բայց... Եկեք վերհիշենք 1988 թ. մարտի առաջին օրերը: Առաջին փախստականները Սումգայիթից: Հայաստանի գրողների միությունում, ինչպես ասում են՝ ասեղ գցելու տեղ չկար: Սարսափած ծերեր, կանայք, երեխաներ, լաց... Պատմում էին սպանությունների, ծեծի ու ջարդերի եւ բռնաբարությունների մասին: Մեկը մյուսից սարսափելի պատմություններ, մարդկանց ողջ-ողջ այրել են խարույկի վրա, կոյտերով դիակներ են լցրել փոսը եւ ծածկել հողի տակ, լցրել են ծովը, ծննդատանն են երեխաներ սպանել: Այդ բոլորն իրականացրել են Բաքվից 25 կմ հեռավորության վրա գտնվող Սումգայիթ քաղաքում, մի քանի օրվա ընթացքում, ողջ քաղաքով մեկ: Իսկ պաշտոնական աղբյուրները շարունակում էին պնդել, որ սպանվել է տարբեր ազգությունների 32 մարդ, որոնցից 26-ը՝ հայ:

13. Դանիելյան Նիկոլայ
14. Դանիելյան Սեդա
15. Թովմասյան Ռաֆիկ
16. Համբարձումյան Միխայել
17. Ղամբարյան Ալեխանդր
18. Մարտիրոսյան Գարրի
19. Մելիքյան Էդուարդ
20. Մելիքյան Իգոր
21. Մելիքյան Իրինա
22. Մելիքյան Ռայիսա
23. Մելիքյան Սողոմոն
24. Մելիքյան Փիրուզա
25. Մեհտիեւա Թամարա
26. Մովսեսովա Հերսիլիա
27. Սահյան Արուսյակ
28. Սարգսյան Շահեն
29. Սաֆարյան Լավրենտի
30. Վարդանյան Նատալյա
31. Տրդատով (Տրդատյան) Գաբրիել

Իսկ այժմ, հաշվի առնելով հանրապետության դպրոցական դասագրքերում տեղ գտած պաշտոնական կեղծիքը՝ «ըստ պաշտոնական տվյալների, Սումգայիթում սպանվել է 27 հայ», ցանկանում եմ ընթերցողների (հատկապես՝ դասագրքերի հեղինակների) ուշադրությունը հրավիրել պաշտոնական հաղորդագրությունների վրա: Հիշենք ՏԱՍՍ-ի հաղորդագրությունները Սումգայիթում սպանվածների մասին՝ «Իզվեստիա» թերթում:

1988 թ. մարտի 3-ին. «Հաստատված է, որ հանցավոր գործողություններից զոհվել է 32 մարդ»:

1988 թ. մարտի 6-ին. «Նրանց ձեռքով սպանվել է 31 մարդ»:

1988 թ. մարտի 26-ին. «Հաստատված է, որ հանցավոր գործողություններից զոհվել է 32 մարդ»:

Հիշենք, որ մարտի 3-ից 4-ի գիշերը Բաքվի հիվանդանոցում ծանր վնասվածքներից մահացել է Տրդատով (Տրդատյան) Գաբրիելը, որն այնտեղ էր հասցվել Սումգայիթից՝ իր տանը հանցագործ խմբի դեմ պայքարում վիրավորվելուց հետո: Դա նշանակում է, որ մարտի 3-ի հաղորդագրության 32-ի (6 ադրբեջանցի եւ 26 հայ) մեջ Տրդատով Գաբրիելը չէր կարող ընդգրկված լինել եւ հաջորդ՝ մարտի 6-ի հաղորդագրության մեջ զոհերի թիվը նախորդ հայտնած թվից մեծ պետք է լիներ, այլ ոչ թե 31: Ըստ երեւույթին, ԽՍՀՄ դատախազության քննչական հատուկ խումբը, որը վարում էր սումգայիթյան գործի հետաքննությունը, «հատուկ» առաջադրանք էր կատարում:

Հիշենք «Դիրքորոշում» («Պոզիցիա») հեռուստահաղորդման մեջ Բորովիկի խոսքը, թե «սկզբում հայտնել են 31, հետո եւս մեկը մահացավ», ԽՍՀՄ գլխավոր դատախազի տեղակալ Կատուսեւը պատասխանեց. «Այո, հիվանդանոցում մահացավ մի կին եւ դարձավ 32»: Նրանցից 26-ը՝ հայ, իսկ 6-ը՝ ադրբեջանցի»: Քանի որ մեզ հայտնի՝ ցուցակում նշված կանանցից միայն Էմմա Գրիգորյանն է մահացել (ավելի ճիշտ՝ բժիշկների ձեռքով սպանվել) հիվանդանոցում եւ այն էլ՝ փետրվարի 29-ին, ապա կարելի է ենթադրել, որ Կատուսեւը նկատի ուներ բոլորովին ուրիշ կնոջ, որը չկա մեր ցուցակում: Հիշենք եւս մեկին՝ Ռազմելա Առուշանյանին, որը նույնպես չկար եւ չէր կարող լինել պաշտոնական թվի՝ 26-ի մեջ, որովհետեւ նա հայտարարված էր անհայտ կորած: Ահա այդ հայտարարության տեքստը. «28.02.88 թ. ժ. 24-ի մոտ խողովակագլանման գործարանի կենտրոնական մուտքից դուրս է եկել քաղ. Ռազմելա Աթանեսի Առուշանյանը, 1939 թ. ծնված, անհայտ կորել է: Վերջին անգամ նրան տեսել են մեկ՝ խժդժություններ իրականացնող անձանց խմբի մեջ, խաղաղության փողոցի վրա երկաթուղու անցման շրջանում»: Հայտարարությունը ստորագրել են քննիչներ Ս. Ե. Պավլովսկին եւ Ա. Ն. Կոզլովսկին:

Կարելի է ենթադրել, որ պաշտոնական հայտարարված «26»-ի մեջ հաշվի չէր առնված նաեւ Լավրենտի Լիպարիտի Սաֆարյանը, մոտ 35 տարեկան, որն ապրում էր Բաքվում եւ աշխատում Սումգայիթում: Նրան սպանել են ջարդերի օրերին աշխատանքի վայրում:

Նշված եւ էլի մի շարք ուրիշ փաստերի առկայության պայմաններում մենք չենք կարող հավատալ նաեւ այն պաշտոնական հայտարարություններին, որ զոհվածների մեջ երեխաներ չկան: Մենք ավելի համոզիչ հիմքեր ունենք հավատալու ռուս գիտնականներին, որոնք գրել են. «Մենք գիտենք, որ տուժել են ե՛ւ երեխաներ, ե՛ւ կանայք» («Իզվեստիա», 25.03.88): Ահա այդ համոզիչ հիմքեր հանդիսացող վկայություններից մի քանիսը:

Ըստ ականատեսների վկայությունների, մի քանի ամսական մի ծծկեր երեխա մահացել է Ս. Վուրղունի անվան ակումբի շենքում, ուր խորհրդային զորքերն էվակուացրել էին Սումգայիթի հայ բնակչության մի մասին: Երեխան մահացել է քաղաքացի Զավեն Բաղասյանի ձեռքերի վրա: Մարմնի վրա վերքեր ու վնասվածքներ չեն եղել, սակայն սկզբնական շրջանում տիրող քաոսը, հակասանիտարական, բուժօգնության իսպառ բացակայությունը թույլ են տալիս երեխային համարել սումգայիթյան ողբերգության զոհ: Իհարկե, այս փաստի վերաբերյալ լրացուցիչ հարցեր են առաջացել, որոնց պատասխանն առայժմ մեզ անհայտ է: Իսկ ովքե՞ր են երեխայի ծնողները, արդյո՞ք նրանք էլ չեն սպանվել: Երեխայի մահվան մասին այս տեղեկությունը հրապարակվել է 1989 եւ 1990 թթ. հարյուր հազարավոր տպաքանակով տպագրված «Сумгаит... геноцид... гласность» գրքում, եւ ոչ մի պաշտոնական հերքում այդ փաստի վերաբերյալ չի եղել: Իսկ ահա Արտեմ Գրիգորյանի ընտանիքի անդամների սպանության մասին տեղեկության պաշտոնական «հերքումը» չի ուշացել. Կատասելի ներկայացրած այդ «հերքումը» հրապարակվել է «Իզվեստիա» թերթում 1988 թ. օգոստոսի 20-ին, որի պատասխան հերքումը մենք ներկայացրել ենք վերը նշված՝ «Сумгаит... геноцид... гласность» գրքում:

Սումգայիթում սպանված Ա. Ղամբարյանի որդին՝ Ռ. Ղամբարյանը վկայում է. «Փետրվարի 29-ի լույս մարտի 1-ի գիշերը, երբ հորս դիակը տեղափոխել են Սումգայիթի դիարան, մենք՝ ես, եղբայրս եւ մեզ ուղեկցող դատախազության երկու աշխատակիցներ, այլ դիակների մեջ տեսել ենք մոտ 10-12 տարեկան երեխայի այրված դիակ» (տես՝ «Сумгаит... геноцид... гласность», 1989, էջ 54):

Ազգությամբ լեհուհի Լիդիա Վլադիմիրի Ռիսովան պատմում է. «Իմ աղջիկը Օլյան, տեսել է, թե ինչպես մի երեխայի նետել են խարույկի մեջ: Նա վազելով տուն է եկել արցունքոտ աչքերով»:

Կան նաեւ տեղեկություններ Սումգայիթի ծննդատան սպանությունների մասին: Այդ մասին մենք հրապարակել ենք Իրինա Միխայելի Աղասյանի եւ Հովհաննես Վլադիմիրի Խաչատրյանի պատմած տվյալները (տես՝ «Сумгаит... геноцид... гласность», էջ 54-55): Ասվածին ավելացնենք եւս երկու վկայություն, որոնց հեղինակների տվյալները մեզ հիմք են տալիս պնդելու, որ Սումգայիթում սպանվել են 100-ից ավելի հայեր:

Գալինա (Գեղեցիկ) Բախշիի Քոչարյանը, որը Սումգայիթի N 11 ԲՇԳ-ի նախկին պետն էր, եւ որի սկեսրոջը՝ Փիրուզա Սելիմյանին սպանել են, պատմում է. «Երբ մտա դիարան, տեսա ահագին շատ դիակներ: Ոչ 32 եւ ոչ էլ 40, այլ շատ ավելին: Ինձ ցույց տվեցին ցուցակ, որպեսզի ես ճանաչեմ մարդկանց, որովհետեւ այստեղ ապրում եմ վաղուց եւ ճանաչում եմ շատերին: Ցուցակը մի քանի էջի վրա էր: Ցուցակում կրկնակի համարակալում կար: Շատ լավ հիշում եմ՝ սկսուրս 155-րդ համարն էր, իսկ դիմացը՝ 31»:

Սումգայիթում հայերի ցեղասպանության զոհերի թվի մասին

«Սումգայիթն» իրենց աչքով տեսածները զարմանում էին պաշտոնական հաղորդումներից. «32 մա՞րդ է զոհվել, սո՛ւս է»: Եվ անվանում էին թվեր, հարյուրավոր եւ նույնիսկ հազար: Անվանում էին կոնկրետ զոհվածների անուններ եւ կազմում ցուցակներ: Շրջանառության մեջ էին տարբեր ցուցակներ, որոնցում ոչ բոլոր սպանվածներն էին նշվում իրենց անուններով: Նշվում էին նաեւ բարեկամական կապերով՝ այսինչի աղջիկը, այսինչի կինը, այսինչի հարսը: Մեր արխիվում կան զոհերի տարբեր թվանակներով բազմաթիվ ցուցակներ: Նրանց մեջ կա մեկը, որում սպանված հայերի թիվը 94 է, եւ որն էլ ընդունեցինք որպես հիմք աշխատելու համար: Մեր վերլուծությունները ցույց տվեցին, որ միեւնույն ցուցակում նույն մարդու մասին տվյալները նշվում են մի քանի անգամ: Օրինակ՝ Ավագյան Լոլայի մասին ցուցակում, բացի իր անուն-ազգանունով նշումից, այլ համարների տակ նաեւ նշված էին (տարբեր ականատեսների վկայությամբ). «Սոկրատի հարսը», «Ջյուդոիստ Սաշայի կինը», «N11 դպրոցի ուսուցչուհի Գրետա Անդրեասյանի աղջիկը», «Մոսկվաբնակ Շանի Մանվելյանի եղբոր աղջիկը»: Ցուցակներում լինում էին նաեւ ականատեսների տեսած «սպանվածներ», որոնք, սակայն, կիսամեռ ու անգիտակից վիճակում հասցվել էին հիվանդանոց, որտեղ երկարատեւ բուժումից հետո աղաչինվել ու ողջ են մնացել: Նրանցից էին՝ Ավագյան Ալեխանդրը, Ադամյան Հրանտը, Գրիգորյան Ջերիզը եւ շատ ուրիշներ:

Այսպիսով, ճշտելով եւ ցուցակից հանելով բոլոր ավելորդ տվյալները, ինչպես նաեւ վերջնականապես չճշտված տվյալները, ստացանք սպանված հայերի հետեւյալ ոչ լրիվ (առանց չճշտված անունների) ցուցակը.

1. Առաքելյան Արտաշ
2. Առուշանյան Ռազմելա
3. Առուշանյան Վլադիմիր
4. Ավագյան Լոլա
5. Ավագյան Յուրա
6. Ավանեսյան Ալբերտ
7. Ավանեսյան Վալերի
8. Արամյան Արթուր
9. Արամյան Արմո
10. Բաբայան Արշակ
11. Բաբայան Ելենա
12. Գրիգորյան Էմմա

Կարծում՝ այստեղ երկու կարծիք լինել չի կարող. դա սպանվածների իրական ցուցակն էր, որի մեջ Գ. Քոչարյանի սկսուր Փ. Մելիքյանը 155-րդ համարն էր, իսկ երկրորդ համարակալումը համապատասխանել է այն դիակներին, որոնց հարազատները եղել էին դիարանում եւ ճանաչել են հարազատներին: Ըստ երեւույթին, հայտարարված 32 թիվն էլ հենց համապատասխանել է ճանաչված դիակների թվին:

Դիակների քանակի վերաբերյալ եռանիշ թիվ է հայտնել նաեւ սպանված Լոլա Ավագյանի հայրը՝ Պավել Մանվելյանը, որն ասել է, որ ինքը եղել է երեք դիարաններում՝ Սումգայիթում, Բաքվում, Մարդաքյանում, եւ իր աղջկա դին գտել է Մարդաքյանում: Նա 71 համարն էր չճանաչված դիակների մեջ: Պ. Մանվելյանը Մոսկվայում ցուցմունք է տվել ու ստորագրել: Եվ իր ցուցմունքում նշել է, որ 3 դիարաններում նա տեսել է 100-ից ավելի դիակ: Այս պատմությունից կարելի է ենթադրել, որ Սումգայիթի դիարանում տեղ չլինելու պատճառով սպանվածների մի մասին բաշխել են Բաքվի եւ Մարդաքյանի դիարաններում:

Ի վերջո, նույնն են հաստատում նաեւ մեր ձեռքի տակ եղած զոհվածների մահվան բժշկական վկայականների տվյալները: Մահվան վկայականների մեջ ամենափոքր համարը Իրինա Մելիքյանինն է՝ 73, իսկ ամենամեծ համարը՝ Իգոր Մելիքյանինը՝ 187: Երկու վկայականներն էլ տրված են Սումգայիթում, միեւնույն օրը՝ 1988 թ. մարտի 5-ին: Հաշվի առնելով այն ժամանակ երկրի դիարաններում գրանցման ընդհանուր կարգը (համարների հաշվարկը կատարվում էր յուրաքանչյուր տարվա սկզբից), կարող ենք ասել, որ Սումգայիթում երկու ամսվա ընթացքում, մինչեւ ջարդի օրերը մահացել է 73-ից քիչ մարդ, որը նշանակում է՝ օրը մոտ երկու մարդ: Իսկ ջարդի օրերին մահացածների թիվը կլինի առնվազն՝ 187-72, այսինքն՝ 115: Այդ օրերի բնական մահերի թիվը հանելուց հետո էլ սպանվածների թիվը կլինի 100-ից ավելի:

Սումգայիթում 1988 թ. փետրվարի վերջին օրերին իրականացված հայերի ցեղասպանության զոհերի թվի վերաբերյալ առայժմ այսքանը: Լրացուցիչ տվյալներ ունենալու դեպքում կհրապարակենք հետագայում:

ՀՐԱՅՐ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

Ովքե՞ր են պատասխանատու Խոջալուի համար

Մի քանի օր առաջ ադրբեջանական մամուլում տպագրվել էր զինդատախազ Խանլար Վելիեւի հարցազրույցը, որտեղ նա ասել էր, թե «Խոջալուի գործով» նախաքննությունն ավարտվել է ս.թ. հունվարին: «Մեղադրանք է առաջադրվել 287 անձի»: Նա անուններ չի հրապարակել: Բայց, դատելով զինդատախազի բնութագրումներից, խոսքը չի վերաբերում Ադրբեջանի այն օրերի իշխանության եւ բանակի հրամանատարության ներկայացուցիչներին: «Խոջալուի ցեղասպանության» պատասխանատվությունը նա բարդում է հայկական ինքնապաշտպանական ջոկատների եւ 366-րդ գնդի մի խումբ սպաների վրա:

Ի հեծուկս Խանլար Վելիեւի, «Ենի Մուսավաթ» թերթի փետրվարի 26-ի համարում տպագրվել է Ղարաբաղյան պատերազմի 1-ին կարգի հաշմանդամ Նաիլ Նասիբովի հիշողությունների հիման վրա կառուցված մի հեստրիկական հոդված: Նաիլ Նասիբովը կռվել է Շիրին Միրզաեւի ջոկատում: Խոջալուի դեպքերի օրը նրանց ջոկատը տեղակայված է եղել Աղդամի շրջանի Շիրբաբալի գյուղում:

«Մեր գյուղի մանկապարտեզը դարձրել էին զորանոց,- պատմում է Նասիբովը եւ ավելացնում,- փետրվարի 24-ին ես զորանոցում հերթապահ էի: Իսկ տղաները գնացել էին Շիրին Միրզաեւի շաբաթ: Խոջալուի ռազմիայի ազդանշանը 90 էր: Խոջալուի հետ կապ կարողանում էինք պահել միայն շաբաթի միջոցով: 25-ի գիշերվա ժամը 4-ի սահմաններում էր: Մեկ էլ Խոջալուի ուղղությամբ միաժամանակ սկսեցին կրակել: Նախիջեւանիկի, Ասկերանի, Խանքենդիի (Ստեփանակերտի- Վ.Ա.) կողմից դեպի Խոջալու գնդակները թափվում էին անձրեւի պես: Շիրին Միրզաեւը մեզ անմիջապես հավաքեց, ասաց. «Գյուղում ով ինչ զենք ունի, վերցրեք, Խոջալուին օգնության ենք գնում»: Այդ ժամանակ Ռեյը (լրագրող Ռեյ Քյարիմօղլուն-Վ. Ա.) այնտեղ էր: Մենք խմբեր կազմեցինք: Ջրամանաչարի ցուցումով Շելլիից շարժվեցինք Խոջալուի ուղղությամբ»:

Դեպքերի ականատեսն ու մասնակիցն, այսպիսով, վկայում է, որ Շելլիից իրենց ջոկատը շարժվել է Խոջալուի ուղղությամբ: Այնուհետեւ Նասիբովը հիշում է. «Լուր եկավ, որ Խոջալուի կենդանի մնացած բնակիչների մի մասն անտառի միջով Ավդալ-Գյուլաբլուի, իսկ մնացածը Շելլիի կողմն է փախչում»:

Նա չի վկայում, թե ով էր լուր տվողը, որտեղից էր հայտնի, որ Խոջալուի բնակչության «մի մասը զոհվել է», իսկ կենդանի մնացածները՝ բաժանվել երկու խմբի, որից մեկը շարժվել է Ավդալ-Գյուլաբլուի, մյուսը՝ Շելլիի ուղղությամբ: Ուշադրության է արժանի, որ մինչ այդ նա ասել է, որ իրենք Խոջալուի հետ կարողանում էին կապվել միայն Շիրին Միրզաեւի շաբաթից: Հնարավոր է, որ ստացիոնար ռազիայից բացի թե՛ Խոջալուի «պաշտպանները», թե՛ Աղդամի շրջանում տեղաբաշխված ջոկատների հրամանատարությունն ունեցել են նաեւ կապի շարժական միջոցներ եւ իրար հետ կարողացել են տեղեկություն փոխանակել: Նասիբովի վկայությունը չափազանց ուշագրավ է այն առումով, որ նրանք «Խոջալուին օգնության գնալու» ճանապարհին արդեն տեղյակ են եղել խաղաղ բնակչության տեղաշարժի երկու երթուղիների մասին: Պաշտոնական քարոզչությունը, մինչդեռ, շարունակաբար պնդում է, որ Խոջալուի բնակիչներն են Աղդամ հասցրել «խաղաղը գրավելու եւ հայրուրավոր զոհվածների մասին լուրերը»:

Հետեւենք Նասիբովի հուշերին. «Երբ մենք այնտեղ հասանք, լույսը բացվում էր: Բայց արդեն երկու ժամ կլիներ, ինչ հայերը Խոջալուի մարդկանց կոտորել էին: Շելլիի մոտ «Գանլը գայա» անունով Գարագայա ժայռ կա: Այդ բարձունքը հայերը գրավել էին: Խոջալուի բնակիչները, որպեսզի փրկվեն, երկու ժայռերի արանքով էին ուզեցել անցնել: Բայց հայերը բարձունքին գնդացիր էին դրել եւ մարդկանց խոտի պես հնձել»:

Ըստ ադրբեջանական քարոզչության, «Խոջալուի խաղաղ բնակչությունը ծուղակի մեջ է ընկել Նախիջեւանիկ գյուղի մոտ»: Նասիբովն, այնինչ, խոսում է Շելլիին մերձական երկու ժայռերի միջակայքում «մարդկանց խոտի պես հնձելու» մասին: Ընդ որում, նախապես նա ասում է, որ երբ իրենք տեղ են հասել, ամեն ինչ ավարտված է եղել: Բայց հետեւենք նրա խոսքին. «Ես, Յաշարը եւ Զանփոլադը հակագրոհով «Գանլը գայա»-ի հայերի դիրքը գրավեցինք: Յաշարը խփվեց, Զանփոլադը վիրավորվեց: Հայերը մի ճանապարհ էին թողել, իբր թե այդտեղից կարելի է փախչելով փրկվել: Բայց Խոջալուի բնակիչներն այդտեղով անցնելիս հայերը նրանց կոտորել են: Հավաստիացեմ. ձեռքերիս ավտոմատ կար, բայց կրակել չէինք կարող: Քանի որ Խոջալուի բնակիչների եւ թշնամու զինվորների միջեւ տարածությունը շատ փոքր էր: Վախենում էինք, որ մերոնց կխփենք»:

Նասիբովն, այսպիսով, փաստում է, որ Շիրին Միրզաեւի ջոկատը «հանդիպել է թշնամու զինվորների»: Ավելին, նրանց հաջողվել է «Գանլը գայա»-ի դիրքը գրավել: Իսկ դիրքն առանց մարտի գրավել անհնար է: Ըստ էության, այդ ջոկատը հարձակվել է Շելլիի մերձակա բարձունքներում ամրացած՝ ԼՂ ԻՈՒ դիրքապահ մարտիկների վրա: Նասիբովը շարունակում է. «Որոշ ժամանակ անց «Գաթիր Մամեդ» անունով հայտնի Յաղուբ Ռզաեւի ջոկատը նույնպես օգնության եկավ: Ես վիրավոր տղաներին թողեցի եւ միացա Յաղուբի խմբին, սկսեցինք առաջ գնալ»:

Խոջալուից դուրս եկած խաղաղ մարդկանց «օգնության հասնելու» հանձնարարությամբ տեղ հասած ջոկատն ինչո՞ւ պիտի օգնական ուժ սպաներ եւ «առաջ շարժվեր», եթե, ինչպես Նասիբովն է պատմում, արդեն իսկ հանդիպել էր նրանց: Այս հարցն իրեն տալիս է Ադրբեջանի զինդատախազը: Իհարկե՝ ոչ: Իսկ Նասիբովը պարզապես զարմացնում է. «Այդ ժամանակ (երբ իրենք առաջ էին շարժվել- Վ. Ա.) գերի վերցրած խոջալուցիների մոտ ԲՈՌՄ եւ ԲՏՌ եկավ: Հայերն սկսեցին ջահել տղաներին եւ աղջիկներին ԲՈՌՄ-ի մեջ հավաքել»:

Սա արդեն ակնհայտ կեղծիք է: Հայերը Խոջալուի բնակիչներին չէի՞ն կարող գերի վերցնել հենց տեղում՝ փակելով նահանջի բոլոր ճանապարհները: Ի՞նչ իմաստ ուներ՝ մարդկանց բաց թողնել մարդասիրական միջանցքով, թույլ տալ, որ նրանք հասնեն մինչեւ Շելլիի մատույցները, գրեթե՝ Աղդամ եւ այնտեղ նոր գերեվարել նրանց:

«Յաղուբ Ռզաեւի Զանփոլադ որդին տանկով էր: Երբ տեսավ, որ մերոնց գերի են տանում, տանկով Ասկերանի ուղղությամբ գնացող հայերի ԲՏՌ-ի ճանապարհը կտրելու գնաց: Ուզում էր այդպես գերիներին ազատել: Քանի որ եթե կրակեր, գերիները նույնպես կզոհվեին: Հայերի ԲՏՌ-ը, տեսնելով, որ արանքից դուրս գալ չի կարող, շրջվեց դեպի Նախիջեւանիկ: Զանփոլադը դարձյալ նրանից ձեռք չէր քաշում: Բայց հայերի տեխնիկան հետ դարձավ եւ կրակ բացեց: Զանփոլադի ԲՏՌ-ը խփեցին, եւ նա այնտեղ զոհվեց: Գերիներով երկրորդ զրահատեխնիկան՝ ԲՈՌՄ-ը գնաց Խոջալուի ուղղությամբ: Մենք, փիչ ուժ ունենալով, կռվում էինք հայերի դեմ: Բայց Խոջալուի բնակիչներին փրկելու համար ուժ չունեինք: Հետո էլ, զգուշանալով, որ կարող ենք կրակել մերոնց վրա, չէինք կարող Խոջալուի բնակիչների ուղղությամբ կրակել»,- դեպքերի «շարունակությունն» այսպես է շարադրում Նասիբովը:

Զինվորական գործից փիչ թե շատ գլուխ հանող ամեն ոք կասի, որ ԲՏՌ-ով կամ ԲՈՌՄ-ով գերիներ անհնար է տեղափոխել: Երկրորդ, եթե հայ դիրքապահները ունենային զրահատեխնիկա, ապա Շիրին Միրզաեւի ջոկատին չէր հաջողվի գրավել «Գանլը գայա»-ի բարձունքը: Այդ ամենը նա ասում է, որպեսզի արդարացնի ադրբեջանական կողմից զրահատեխնիկայի ներկայությունն այնտեղ, որտեղ, ըստ էության, խնդիր պետք է դրված լիներ ոչ թե «հայերից դիրքեր գրավելու» անվան տակ մարտ սարքել, այլ՝ միայն օգնել Խոջալուի բնակիչներին:

Նասիբովի մյուս պատմածներն իր վիրավորվելու, անգիտակից վիճակում գտնվելու մասին: Նասիբովն, այնինչ, խոսում է Շելլիին մերձական երկու ժայռերի միջակայքում «մարդկանց խոտի պես հնձելու» մասին: Ընդ որում, նախապես նա ասում է, որ երբ իրենք տեղ են հասել, ամեն ինչ ավարտված է եղել: Բայց հետեւենք նրա խոսքին. «Ես, Յաշարը եւ Զանփոլադը հակագրոհով «Գանլը գայա»-ի հայերի դիրքը գրավեցինք: Յաշարը խփվեց, Զանփոլադը վիրավորվեց: Հայերը մի ճանապարհ էին թողել, իբր թե այդտեղից կարելի է փախչելով փրկվել: Բայց Խոջալուի բնակիչներն այդտեղով անցնելիս հայերը նրանց կոտորել են: Հավաստիացեմ. ձեռքերիս ավտոմատ կար, բայց կրակել չէինք կարող: Քանի որ Խոջալուի բնակիչների եւ թշնամու զինվորների միջեւ տարածությունը շատ փոքր էր: Վախենում էինք, որ մերոնց կխփենք»:

Նասիբովն, այսպիսով, փաստում է, որ Շիրին Միրզաեւի ջոկատը «հանդիպել է թշնամու զինվորների»: Ավելին, 1992թ. հունիսի 18-ին, ծառայողական գործուղմամբ Բաքվից զորամաս վերադարձող Շիրին Միրզաեւը զոհվել է Գարալար գյուղի մոտ՝ ճանապարհին տեղադրած ականի պայթյունից: Խոսքը նույն Շիրին Միրզաեւի մասին է, որի ջոկատը 1992թ. փետրվարի 25-ին Շելլիից շարժվել է Խոջալուի ուղղությամբ:

Դրանից մեկ շաբաթ առաջ, դիրքերն ստուգելուց հետո հետդարձի ճանապարհին ականի վրա պայթել է Ալլահվերդի Բաղիրովի մեքենան: Նա եւ վարորդը զոհվել են: Բաղիրովը մեկն էր Խոջալուին «օգնության շտաբողներից»:

1992թ. դեկտեմբերին ձերբակալվել է Նասիբովի պատմության մեջ հիշատակված՝ «Գաթիր Մամեդ» կեղծանունով հայտնի Յաղուբ Ռզաեւը: Պահվել է Բաքվի Բայիլի բանտում: Դա Ադրբեջանի ԱԱ նախարարության բանտն է: Գործը, սակայն, դատարան չի հասել. Ռզաեւը բանտում «հանկարծամահ է եղել»:

1992թ. հունիսի 15-ին Նախիջեւանիկի մոտ զոհվել է հեռուստալրագրող Չինգիզ Մուսաֆաեւը: Դեպքը տեղի է ունեցել այն բանից հետո, երբ նա DPA գործակալությանը տված հարցազրույցում կասկածել է, որ «Խոջալուի ողբերգության» մասին իր եւ հետագայում նկարահանված կադրերի տարբերությունն ահռելի է:

Եվ, վերջապես, Ռեյ Քյարիմօղլուն, որ դեպքի օրն արդեն եղել է Աղդամի շրջանի հատկապես այն ջոկատներից մեկում, որը «պիտի օգնության գնար Խոջալուին», լրագրող էյնուլլա Ֆաթուլլաեւի մասին ասել է. «Նա վաստակել է ոչ պակաս, քան տասը տարի, իսկ ավելի լավ կլինի, որ բանտում մեռնի»: Ինչո՞ւ:

Քանի որ Ֆաթուլլաեւը կասկածել է Խոջալուի «ողբերգության» պատշաճական վարկածին:

Որեւէ բան չի՞ ասում դա: Այսքան «պատահականությունները» պատահա՞կան են: Ցանկալի է, որ Ադրբեջանի զինդատախազությունը ճնշության առնի այն հանգամանքը, թե ինչո՞ւ Խոջալուի դեպքերի հետ կապ ունեցող հայտնի մարդիկ կա՛մ զոհվել են, կա՛մ բանտում սպանվել, կա՛մ ներկայումս պատիժ են կրում:

Հ.Գ. Զոհված Չիգիզ Մուսաֆաեւը, Ալլահվերդի Բաղիրովը, Շիրին Միրզաեւը եւ այս պատմության մեջ միայն մեկ անգամ հիշված Զանփոլադ Ռզաեւը հետմահու արժանացել են Ադրբեջանի ազգային հերոսի կոչման: Նույն պատվին է արժանացել նաեւ Խոջալուի «պատշաճության կազմակերպիչ» Ալիֆ Հաջիեւը, որի պատշճական կենսագրականում ասված է, որ «նահանջից առաջ պայթեցրել է օդանավակայանի դիսպետչերականը, որպեսզի թշնամու ձեռքը չընկնեն կարեւոր նշանակության փաստաթղթերը»:

Չգործող օդանավակայանի դիսպետչերականում «պետական կարեւորության» ի՞նչ «փաստաթղթեր» կարող էին լինել: Իրականում Հաջիեւը պայթեցրել եւ հրկիզել է օդանավակայանն ամբողջությամբ: Իսկ «Մեմորիալն» ադրբեջանցիների վկայությունների հիման վրա արձանագրել է, որ «գրոհի գիշերը հատկապես օդանավակայանին մոտ գտնվող տներում հրդեհ է բռնկվել՝ առաջացնելով խուճապ»:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՏԱՐԲԵՐ ՄԻՋՈՐԵԱԿԱՆԵՐ

Ամերիկա-կորեական զորավարժություններ

ԿԺԴՀ-ն կրկին սպառնում է

ԱՄՆ-ը եւ Հարավային Կորեան երեկ սկսել են ամենամյա համատեղ զորավարժություններ, որոնք կտեւեն 11 օր: Ֆրանսդրեսի տվյալներով, լայնընդգրկուն զորավարժություններին մասնակցում են 200 հազար հարավկորեացի եւ մոտ 13 հազար ամերիկացի զինծառայողներ:

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ զորավարժությունների ծրագիրն ընդգրկում է ամերիկյան ծովուժի մարտական հրաձգություն, օդային զորավարժանքներ եւ խոշոր բնակավայրերում մարտական գործողություններ վարելու վարժանքներ: Կիրառանացվի նաեւ ռազմական հակամարտությունների համակարգչային մոդելավորում:

Վաշինգտոնն ու Սեուլը խոսում են զորավարժությունների պաշտպանական բնույթի մասին, սակայն Փենյանում կարծում են, որ դրանք ագրեսիայի նախապատրաստություն են: Դեռ կիրակի օրը ԿԺԴՀ-ն հայտարարեց, որ եթե զորավարժություններ սկսվեն, ապա Սեուլը կվերածվի «կրակի ծովի»:

Փենյանը սպառնում է նաեւ հարվածել հարավկորեական «ռազմակայանին», որը դարձել է ԿԴԺՀ-ի դեմ ուղղված «հոգեբանական պատերազմի կենտրոն»: Խոսքը Իմջինգան գետի ափին գտնվող «Իմջինգակ» հարթակի մասին է, որտեղից արձակվող ռադիոստաները տարածում են թռուցիկներ Կիմ Ջոն Իրի վարչակարգը տապալելու կոչերով: Քարոզչական թռուցիկներից բացի, ռադիոստաները ԿԺԴՀ տարածք են նետում DVD-ներ, 1 դոլարանոցներ, արաբական երկրների վերջին իրադարձություններին նվիրված գրքույկներ: Ենթադրվում է, որ Թունիսի եւ Եգիպտոսի վարչակարգերի անկումը կարող է «օրինակ» ծառայել հյուսիսկորեացիների համար:

Ամերիկա-կորեական վերջին զորավարժություններն անցկացվել էին 2010-ի նոյեմբերին, երբ երկու Կորեաների հակամարտության պահին հարավկորեական Յոնփենդոր կղզու հրետակոծության ժամանակ սպանվել էին 4 եւ վիրավորվել 20 անձիք: Դրանից հետո երկու Կորեաները քանիցս իրար սպառնացել են պատերազմով:

Ֆրանսիայի արտգործնախարարը հրաժարական տվեց

Ֆրանսիայի արտգործնախարար Միշել Ալիո-Մարին կիրակի օրը հրաժարական է տվել գրեթե մեկ ամիս տեւած աղմկալի պատմությունից հետո՝ Թունիսի նախկին նախագահ Բեն Ալիի հետ նրա շփումների պատճառով:

Ֆրանսդրեսը մեջբերում է նախկին արտգործնախարարի դիմումի այն խոսքերը, որ վերջին շաբաթներին ինքը եւ իր ընտանիքը պարբերաբար ենթարկվում էին «քննադատության եւ վիրավորանքների», ինչը բացասաբար էր անդրադառնում աշխարհում Ֆրանսիայի նկարագրի վրա: Ինքը չէր կարող թույլ տալ, որ իր հետ կապված սկանդալը «վնասի երկրի վարկին»:

Նախագահ Նիկոլա Սարկոզին կիրակի երեկոյան ունեցած հեռուստաելույթում հայտարարել է, որ նոր արտգործնախարար կդառնա պաշտպանության նախկին նախարար Ալեն Ժյուպեն: Երկրի կառավարության մեջ կատարվել են նաեւ այլ փոփոխություններ: Այսպես, պաշտպանության նախարար է դարձել Ժերար Լոնգեն, որը Սենատում «Ժողովրդական շարժման միություն» կառավարող կուսակցության առաջնորդն է: Նոր ներքին գործերի նախարար է նշանակվել Սարկոզիի դիվանատան ղեկավար Կլոդ Գեանը:

Ինչ վերաբերում է Ֆրանսիայի առաջին կին արտգործնախարար Միշել Ալիո-Մարիի հետ կապված սկանդալին, ամեն ինչ սկսվել էր հունվարին, երբ նա մի քանի օր անցկացրել էր Թունիսում, օգտվելով Բեն Ալիի մասնավոր օդանավից: Այդ մասին հաղորդել էր «Լը Կանար անշենե» երգիծաթերթը, ավելացնելով, որ արտգործնախարարը Թունիսի ոստիկանությանը օգնություն է առաջարկել «անկարգությունների» ճնշման գործում:

Հենց այդ օրերին Միշել Ալիո-Մարիի ծնողները հիշյալ գործարարի բաժնեմասն էին ձեռք բերել անշարժ կայքի վաճառքի Ikram գործակալությունում:

Այդ մերկացումներից հետո Սոցիալիստական կուսակցությունը պահանջել էր արտգործնախարարի հրաժարականը: Վերջինս ասել էր, թե արձակուրդի ժամանակ ինքը նախարար չէ, այլ մասնավոր անձ: Այդ պնդումը վրդովմունքի նոր ալիք էր բարձրացրել:

Սկանդալի կապակցությամբ Նիկոլա Սարկոզին նախարարներին պարտավորեցրել է արձակուրդներն անցկացնել Ֆրանսիայում, իսկ առանձին դեպքերում արտերկիր մեկնելու համար նրանք պետք է ստանան վարչապետի եւ Ելիսեյան պալատի թույլտվությունը:

ԱԶԳ

Նախագնացություն

Գեղանկարչության ծովակալի ալիքը եւ Հարավային խաչը

Հովհաննես Այվազովսկին մի հանճարեղ կսավ ունի՝ «Ալիքը»: Ասում են, ժամանակակիցներին զարմացրել է նման անվանումը: «Իններորդ ալիքը» դեռ հասկանալի է: Այնտեղ դրամա է: Այնտեղ առաջին իսկ հայացքից աչքի է զարնվում անսանձ մուսանգի պես ծառս եղած ալիքը: Իսկ ընդհանրապես չէ՞ որ նկարն այլ բանի մասին է: Դրա մասին ինչ-որ ժամանակ հոպանցիկ խոսել ենք: Այո, բայց հիմա խոսքն այլ բանի մասին է: Ոչ այն մարդկանց, որոնք կոտրված կայմին են կառչած՝ ինչպես փրկարար խաչի, եւ նայում են ահռելի ալիքին, որը գուցե մեկ ակնթարթ անց հզոր հարվածով իրենց տախտակի պես մեխելու է ջրային ահավոր գոգավորության հատակին: Ո՛չ, այն մարդկանց մասին չէ, որոնք անհուսության մեջ չեն կորցնում հույսը: «Ալիքը» հենց ալիքի մասին է: Սակայն մեծ ծովանկարչի ժամանակակիցներին իրոք զարմացնում էր այն, թե ինչպես կարելի է փոթորկի ժամանակ անհամար ալիքներից վերցնել ու առանձնացնել միայն մեկը: Հանճարեղ Պլատոնը, որ Հիպոքրատի հետ առաջին երկխոսությունում փորձում է գտնել գեղեցկության չափանիշները, գալիս է այն եզրակացության, որ գոյություն չունեն այնպիսի «չափիչ սարքեր», որոնք կարող են սահմանել գեղեցիկի փաստը կամ աստիճանը: Գորկին պնդում էր, որ գեղեցկությունը ոչ թե անապատում է, այլ արաբի ուրտում, ոչ թե Սկանդինավիայի ձյուների մեջ, այլ ֆինների ուրտում: Հիշենք, թե ինչ էր ասում Իլյա Էրենբուրգը իր մեծ բարեկամ Մարիրոս Սարյանի մասին. «Նրան չի սազում «ոճ» բառը: Ոճերը կարող են փոխվել, բայց աչքն ու սիրտը՝ ոչ»: Կարծում եմ, այդպիսին է նաեւ Այվազովսկին: Եվ իրոք, անհաշվելի ալիքներից նրա աչքերն ընտրում են մեկը, հետեւում՝ նկատելով ու չնկատելով մնացյալը, իսկ այդ ժամանակ սիրտը հուզմունքով սեղմվում է, հանճարին հուշելով. «Այո՛, դա հենց ինքն է»: Հավանաբար այդպես է լինում այն ժամանակ, երբ ինչպես ասում են, սիրահարվում ես առաջին հայացքից: Եվ Այվազովսկու հետ դա պատահել է, ինձ թվում է, ավելի քան վեց հազար անգամ: Հենց այդքան գլուխգործոցներ է ստեղծել «գեղանկարչության ծովակալը»: Այնպես որ, նրա «Ալիքը» ավելին է, քան ալիք: Դա ուրի ընտրությունն է: Այն բոլորովին էլ չի հակադրվում այլ ալիքներին: Նկարիչը երբեք չի ասի, թե ինչու ընտրեց հենց այդ ալիքը: Ինչպես որ հավանաբար ինքը՝ Լեոնարդո դա Վինչին երբեք չէր կարողանա ասել, թե իր լեգենդար գաղտնիքը կամ կնոջ ժպիտի հանելուկը պատկերելու համար ինչու ընտրեց միայն Մոնա Լիզա Ջոկոնդային:

Եվ ահա, միստիկական տիեզերքի հենց կենտրոնից, որտեղ գտնվում է «Արմենիա»-ն, մինչեւ հստակ տեսանելի հորիզոն, որը շրջանակում է այդ ահռելի, քանասմագորիկ կտավը, մենք ականատես ենք այդ նույն անհաշիվ ալիքների, որ իրենց ծանր քայլերով նմանվելով սնդիկի հսկայական կաթիլների, ոչ թե հոսում, այլ ծանրորեն գլորվում են, քվելով բնական հոսանքից եւ քամու պոռթկումներից: Հենց այդ պատճառով էլ գուլիվերյան ահռելի ալիքների խորապատկերին մի փոքրիկ լիլիպուտ է թվում մեր միակայմ նավը, որը մի ինչ-որ անսովոր ռիթմայնությամբ թեքվում է մեկ մի կողքի, մեկ մյուս, եւ ճոճումների որոշակի քանակից հետո սկսվում է անհավասալի ակրոբատիկան: Եվ այնժամ մեր փոքրիկ նավն, ասես փնչալով վեր է բարձրանում եւ սահուն իջնում լանջն ի վար: Եվ անմիջապես էլ, արդեն սրընթաց բարձրանում է ավելի վեր, եւ մենք արդեն հասատ գիտենք, որ դղրդյունով գամվելու է «ջրաձորակի» հատակին: Ու հետո ամեն ինչ նորից է սկսվելու:

Նման բան նախկինում չէր եղել ո՛չ հյուսիսային Խաղաղ օվկիանոսում, ո՛չ հյուսիսային Ատլանտյան եւ ոչ էլ հարավային: Այսքիսի բան մենք դիտարկում ենք միայն այստեղ՝ հարավում: Ահա արդեն յոթ օր անընդմեջ, գիշեր ու ցերեկ, առանց մի ակնթարթ շունչ առնելու, մենք նավից մինչեւ հորիզոն ընկած այդ ողջ կտավի վրա նույն բանն ենք տեսնում եւ սեփական մաշկի վրա զգում դրա վեհությունը, ուժն ու գեղեցկությունը: Անհնար է ընդհանուր նավասենյակում սեղան նստել եւ նախաճաշել, ճաշել ու ընթրել: Պարզապես ֆիզիկապես անհնար է: Պետք է արժանին մատուցել երիտասարդ կոկիկ, որն այնուամենայնիվ հաջողացնում է այդ պայմաններում ինչ-որ բան պատրաստել: Եվ բաժանում է չոր մթերաբաժնի ձեւով, նույնիսկ կարտոֆիլի պյուրեն: Հերթափոխայինները տախտակամածի վրա են գիշերը եւ ցերեկը չորսական ժամ: Ե՛վ գիշերը, ե՛ւ ցերեկը աշխատում են: Բանը միայն այն չէ, որ կարողանան պահել նավի կուրսը, այլ որ օգտագործեն բուն ալիքների շարժումը: Այդ մասին շատ անգամներ եմ գրել: Բայց երբեք այնպես չի եղել, որ ութ օր անընդմեջ (եղանակի տեսությունից տեղյակ ենք, որ շարունակվելու է եւս վեց օր) նավը գոնե մեկ րոպե գտնվի նույն դիրքում: Իհարկե, հաշվի մեջ չէ այն ու մշտական թեքումը, որն առաջացնում է քամու ուղղությունը, փքելով ջենովա, սակսել կամ գրոտ առագաստները: Այդպիսի, ես կասեի՝ բնական թեքումը միշտ էլ կա: Դրա համար նույնիսկ ճնաշեղերի եզրերին բրեզենե բարձր շերտեր են արված, որպեսզի ճնած ժամանակ ցած չընկնեն: Իմը վաղուց պատռվել է: Իհարկե, եթե ինձ պետք լիներ, վաղուց էլ կնորոգեի: Ես ճնում եմ բացառապես աջ կողքիս, դեմքով դեպի ձախ նավակող: Ինքս պարզ հարմարություն եմ ստեղծել. ձախ կողքիս տակ երկու երկարավուն բարձեր եմ խցկում, որոնք ինձ սեղմում են նավախցի պատին: Եվ սացվում է միջնորմ: Առավելագույն կողաթեքման դեպքում ձեռքս մեխանիկորեն գցում եմ ցցվածքին: Եվ նույնիսկ՝ ճնած ժամանակ:

Այսօր առավոտյան կոկ Սաքոն որոշեց մեզ խաշած ձու պատիվ անել: Եվ գեղագիտություն պահպանելու նպատակով յուրաքանչյուրին մատուցեց ափսեով: Որոշեցինք գոնե մի րոպեով նստել: Եվ ցանկանալով ինչ-որ կերպ սանձահարել նավը, մեր նավապետ Սեմը, ձվերով ափսեն արդեն ձեռքին, ասաց, որ հերթափոխայինները հինգ րոպեով փոխեն նավի ուղղությունը, այսինքն, շարժվենք համընթաց: Բայց չէր հաստատել խոսքն ավարտել, երբ կտրուկ թեքումից աթոռով հանդերձ վեր նետվեց: Երկաթե ծալովի աթոռ է, որից ամուր բռնած, հաջորդ պահին գնդակի պես սուրաց դեպի աջ նավակող: Ձվերը թռան տարբեր կողմեր: Երբ հասկացանք, որ ամեն ինչ կարգին է, քանզի Սամվելի դեմքին լայն ժպիտ հայտնվեց, ապա ընդհանուր քրքիջով ընդունեցինք նրա արտաբերած նախադասությունը. «Փա՞ք ասծո, ձվերը չկոտրվեցին»:

* * *

... Կա՞ մեզանից մեկը, որ մանկուց հիացած չլինի ոչ թե պարզապես երկնքով, այլ աստղալից երկնքով: Եվ կա՞ մեկը, որ առաջին անգամ մանչացույց անելով վառվռուն յոթ աստղերից կազմված հայտնի «շերեփը», հպարտությամբ արտաբերած չլինի. «Սա Մեծ արջն է»: Միայն հետագայում էինք իմանալու, որ դա բոլորովին էլ ինքը՝ Մեծ արջը չէ, այլ «շերեփի» է, որ ներառված ավելի նվազ վառ աստղերի ահռելի խմբում, կազմում է Մեծ արջի համաստեղությունը:

Ոմանց մեջ այսքանով էլ ավարտվում էր աստղային երկնքի վերաբերյալ գիտելիքների ծավալը, ուրիշները կարողանում էին տարբերել մինչեւ տասը հայտնի աստղեր ու համաստեղություններ, իսկ ութամյա Վիկտոր Համբարձումյանն ապշեցրեց իրեն՝ Հովհաննես Թումանյանին, որը փոքրիկ տղայի մեջ տեսավ բազմաչարչար Հայաստանի ապագայի մի ինչ-որ ընդհանրացված կերպար ու խորհրդանիշ: Ցմոռանանք, որ դա մոտավորապես 1916 թվականին էր:

Իհարկե, աստղային երկնքն ամենից լավ երեւում է, երբ բաց ծովում կամ օվկիանոսում ես: Տարիների հետ գիտակցում ես, որ բավական է մի արագ հայացք նետել, որպեսզի միանգամից պատկերացնես երկնակամարի ողջ կտավը: Բավական արագ կողմնորոշվում ես, թե որտեղ է, ասենք, Բեւեռային աստղը, բոլորովին չմտածելով, որ այն Հյուսիսային բեւեռին ամենից մոտ վառ աստղն է, որ այն բեւեռից մեկ աստիճան հեռավորության վրա է, որի հետեւանքով համարյա անփոփոխ դիրք է պահպանում երկնքում: Իհարկե, կարելի է համարել, որ այն Փոքր արջի շերեփիկի վերջին աստղն է: Բայց ոչ ոք նման բաներով չի զբաղվում: Պարզապես գիտեն, որ Բեւեռային աստղը ցույց է տալիս հյուսիսի ուղղությունը: Ահա թե ինչն է ամենագլխավորը, մանավանդ երբ ձեռքիդ կողմնացույց չունես: Եվ այդ ամենը բոլորին հայտնի էր հինավուրց ժամանակներից: Հայտնի էր դարեր առաջ, եթե չասենք՝ հազարամյակներ: Իսկ որքա՞ն լեգենդներ ու առասպելներ են ծնվել՝ կապված աստղերի եւ առանձնապես համաստեղությունների հետ: Ուղղակի սուր բովանդակության նովելներ, որտեղ ամենից հաճախ ջուր էր պղտորում անառակ Զեւսը: Բայց այդ ամենը խոսվում է բացառապես հյուսիսային կիսագնդի, հյուսիսային երկնակամարի հետ կապված: Եվ դա բնական է. Հին Հունաստանը, Հին Հռոմը եւ դեռ Հին Եգիպտոսն էլ գտնվում են հյուսիսային կիսագնդում:

Եվ ահա լողում ես մեկ-երկու օր, մեկ-երկու ամիս, արդեն երեք լիալուսին բոլորելով, եւ գլխավերեւումդ ասես ամեն ինչ օսար է: Մի օր, հերթական անգամ ժամերով վառ աստղալից երկնքին քառասնական լայնություններում նայելուց հետո (հյուսիսում համապատասխանում է Հայաստանի գտնվելու վայրին) ես սարսափեցի: Հիշեցի, թե որքան երկար եմ նայել Արարատին հակառակ կողմից, եւ որքան տգեղ թվաց ինձ այն: Ամոթն ինձ պատեց, նույնիսկ այդ մտքից սարսափեցի: Ինչպե՞ս կարող է նման բան լինել: Եվ ընդհանրապես ինչպես կարելի նման բան ասել կամ մտածել: Արարատը միշտ Արարատ է: Աստվածաշնչյան լեռ, որը համաձայն բոլոր մենագրությունների, հանրագիտարանների եւ դասագրքերի՝ առանց բացառության, գտնվում է Հայկական բարձրավանդակի տարածքում:

Բնականաբար, հակառակ կողմը թեզ անծանոթ է: Եվ տեսարանն էլ անսովոր է: Նույնն էլ հիմա է կատարվում, այստեղ՝ «Արմենիա» առագաստանավի վրա, որը դեռ երեք, եթե ոչ չորս ամիս էլ լողալու է հարավային կիսագնդում: Այո, լեգենդները փիչ են, առասպելներ չկան, իսկ գուցե կան, եւ ես չգիտեմ... Բայց հստակ գիտեմ այլ բան: Դրանք մեր հարազատ աստղերն են: Աստված վկա, նույնիսկ չափազանց շատ են աստվածային գեղեցկության հաստվածները հարավային երկնքում: Եվ ընդհանրապես այստեղ երկնակամարն ամբողջությամբ վերցրած գեղեցիկ է: Այո, այստեղ ավելի փիչ են համաստեղությունները: Ցավոք, այստեղ չկա սեփական բեւեռային աստղ, այդ իսկ պատճառով էլ գոյություն չունի «կենդանի», որը մատնանշի հարավը: Բայց փոխարենը կա բավական հայտնի Հարավային խաչը: Ի դեպ, այն նավից առաջինը տեսավ նավապետ Սամվել Կարապետյանը: Ավաղ, պետք է խոստովանեմ, մեզ հաճախ չի վիճակվել տեսնել հարավային աստղալից երկինքը: Դա արդեն եղանակի պատճառով: Հարավային խաչն իր մակերեսով այնքան էլ մեծ համաստեղություն չէ: Այն նույնիսկ խաչի էլ շատ չի նմանվում: Եվ նրա ավելի երկար թեւը ցույց է տալիս ուղիղ աշխարհի հարավային բեւեռը: Հայաստանում այն տեսանելի չէ: Իսկ «Արմենիա»-ից նույնիսկ շատ լավ է երեւում:

Հարավային խաչի հայտնի լինելու մասին է վկայում եւ այն, որ պատկերված է Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Պապուա-Նոր Գվինեայի եւ Սամոայի պետական դրոշներին: Տա՛ Աստված, որ թվարկված բոլոր երկրների դրոշները ծածանվեն «Արմենիա»-ի վրա:

ՀՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ
Խաղաղ օվկիանոս

ԱՆԿՈՒՄՆԵՐԻ ՍԱՐՍԱՓԻՑ

«Ստելությունը ստեղծում է մեծ էներգիա, որը վերջանում է արյունահեղությամբ»

Թաստրագիր, հրապարակախոս Վահրամ Սահակյանը հայաստանյան հասարակությունը տեսնում է գորշ ու մռայլ գույների մեջ: Եթե ամեն օր թեկուզ մի կանգառ քայլելիս հաշվենք, թե փողոցում քանի՞ ուրախ ու տխուր դեմքով մարդկանց տեսանք, ու քանի՞ հոգու, որոնք դրսում քայլում են՝ իրենք իրենց հետ խոսելով, կհամոզվենք, որ Վահրամ Սահակյանի դիտարկումն հեռու չէ իրականությունից: Անառողջ հասարակություն տարիների ընթացքում ձեւավորվել է տարբեր պատճառներից՝ սոցիալական, քաղաքական, հոգեբանական եւ այլն:

Երեկ «Հենարան» ակումբում Վահրամ Սահակյանը, սկզբում խոսելով գոյություն ունեցող կուսակցություններից, նշեց. «98 տոկոսով բոլոր կուսակցություններն էլ թիմավորված են եւ ունեն իրենց նպատակները: Դրանցից որեւէ մեկը չի մտածում ժողովրդի մասին: Նրանց միակ նպատակն է մնալ իշխանության կա՛մ կողքին, կա՛մ կազմում, կա՛մ լինել իշխանություն: Երբ նայում ես Ազգային Ժողովի պատգամավորներին, ծիծաղդ գալիս է»: Այնուհետեւ անդրադառնալով մարտի մեկին, բարունակական ցույցերին ու հանրահավաքներին, Վահրամ Սահակյանը նշեց. «Եթե կան քաղբանտարկյալներ, դա բնական երեւույթ է: Կան նաեւ մարդիկ, որոնք նստած չեն բանտում, դա անբնական երեւույթ է»: Բանախոսը կարծում է՝ միեւնույնն է, ընդդիմությունը ոչինչ անել չի կարող. «Հարկավոր է կրթել մարդկանց, եւ ամեն մարդ թո՛ղ մտածի առաջին հերթին իր մասին՝ արդյոք ինքն ազնիվ է ու ապրում է մաքուր կյանքով, հետո նոր պահանջներ ունենա: Չի՛ կարելի լինել պահանջատեր ու միաժամանակ լինել մեղավոր: Հիշենք՝ 90-ականներն ինչպիսի ծանր հարված էին մեր ժողովրդի համար, ու նորից կանգնել մարդկանց կողքին, որոնք կազմակերպել էին դա... Նրանց հետ պետք է տարվեն դաստիարակչական աշխատանքներ, բայց ո՞նց, ո՞վ կարող է դա անել»: Վահրամ Սահակյանն ինքն էլ պատասխանում է իր հարցադրմանը. «Ոչ ոք էլ չի կարող. կառավարությունն ունակ չէ, որովհետեւ մտածում է միայն իր մասին: Ոչ էլ դա կարող են անել ընդդիմություններն ու դրանց պարագլուխները, որոնք էլ միայն մտածում են իշխանության գալու մասին, ու շատ լավ է, որ քաղաքական շատ հանցագործներ մինչեւ հիմա դուրս չեն եկել բանտերից: Եթե ինձ մնար, նրանց բանտում ավելի երկար կպահեի»: Այնուհետեւ, բանախոսը նշեց՝ եթե լինի առողջ ընդդիմություն, ինքը կկանգնի նրանց կողքին. «Իսկ եթե լինի առողջ կառավարություն, նրան էլ կարելի է օգնել ու խորհուրդներ տալ»: Վահրամ Սահակյանը ցավում է մարտիմեկյան իրադարձությունների համար, բայց կարծում է, որ առկա աստելությունն այլ կերպ վերջանալ չէր կարող. «Պետք է արյուն թափվեր: Աստելությունը ստեղծում է մեծ էներգիա, որը վերջանում է արյունահեղությամբ»:

Հետո անցնելով մշակութային անցուդարձին՝ թաստրագիրն անդրադարձավ գրախանութների փակմանը. «Էլ ինչպե՞ս չփակվի գրախանութը, եթե մարդիկ գրախանութ չեն գնում»: 2002-2004 թվականներին՝ միայն կես տարում թաստրագիրն իր գրքից 3000 օրինակ է վաճառել, իսկ 2009-ից մինչեւ հիմա կարողացել է վաճառել ընդամենը 300 գիրք: «Գրականության հանդեպ հետաքրքրությունը կորել է, այդ հարցում, իհարկե, ինտերնետը եւս դեր է խաղացել: Գրականությունով չհետաքրքրվելու համար 100 տեսակի պատճառներ կան», ասաց բանախոսը: Այնուամենայնիվ, նա զարմանում է, որ մարդիկ դեռ շարունակում են թատրոն այցելել. «Մարդիկ տեսարաններ սիրում են, նրանց թամաշա է պետք: Էդ ցույցերի ժամանակ էլ, որ հավաքվում են, բոլորը չէ, բայց կան, որ սպասում են տեսարանների»:

Վահրամ Սահակյանը տարբեր երեւույթներից դժգոհեց, որեւէ բանից գոհունակությամբ չխոսեց: Սոցիալական ծանր պայմաններն ու ապագայի հանդեպ անորոշությունը արտագաղթի հիմնական պատճառներն են դարձել: Շատերը Հայաստանից հեռանալու հնարավոր առիթը բաց չեն թողնում: Սրա վերաբերյալ Վահրամ Սահակյանը եւս կարծիք հայտնեց. «Հայաստանը հայաթափվո՞ւմ է, թո՛ղ հայաթափվի, ի՞նչ ասեմ: Ինքս դրսում շատ եմ ապրել: Դա սովորական երեւույթ է. մարդը պետք է ապրի աշխարհում, ոչ թե ինչ-որ քարաբեկորի վրա»:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Նազիկ Ավդալյանը ՀՀ հնգակի չեմպիոնուհի

Մրցահարթակ դուրս եկան ռեկորդային թվով մարզուհիներ

Ծանրամարտի Հայաստանի կանանց առաջնության գլխավոր անակնկալը 2009-ի աշխարհի չեմպիոնուհի Նազիկ Ավդալյանի ելույթն էր: Նախապես հայտարարվել էր, որ Նազիկը չի մասնակցելու մրցումներին: Սակայն ինչպես նշեց մեր անվանի մարզուհին, ինքը շաս էր կարոտել մրցահարթակին եւ ցանկանում էր երկարաւեւ ընդմիջումից հետո կրկին զգալ մրցակցության շունչը: Եվ Նազիկը հուսախաբ չարեց իր երկրպագուներին՝ հաղթող ճանաչվելով մինչեւ 69 կգ քաշային կարգում: Ճիշտ է, երկամարտի նրա արդյունքը՝ 190 կգ (85+105) բնավ էլ բարձր չէր, սակայն դա էլ բավական էր 5-րդ անգամ հանրապետության չեմպիոնուհու տիտղոսին արժանանալու համար: Հիշեցնենք, որ Նազիկը վիրահատությունից հետո 7 ամիս մրցահարթակ դուրս չէր եկել: Նա նոր է սկսել մարզումները, ուստի հասկանալի է ցույց տված համեստ արդյունքը: Կարեւորն այն է, որ Ավդալյանն այժմ աստիճանաբար լավ մարզավիճակ է ձեռք բերում՝ նախապատրաստվելով տարվա գլխավոր ստուգատեսին:

Մեր մյուս անվանի մարզուհին՝ Մելինե Դալուզյանը եւս իր հավասարը չուներ մինչեւ 75 կգ քաշային կարգում: Մելինեն հաղթող ճանաչվեց երկամարտի 240 կգ (105+135) արդյունքով:

Բավական բարձր ցուցանիշով չեմպիոնուհու տիտղոսը մինչեւ 58 կգ քաշային կարգում նվաճեց Էլեն Գրիգորյանը՝ 202 կգ (90+112): Այս ցուցանիշով նա գերազանցեց քաշային հաջորդ երկու կարգերում ուժեղագույնը ճանաչված մարզուհիներին: Այսպես, մինչեւ 63 կգ քաշային կարգում Քրիստինե Պետրոսյանը հաղթող էր ճանաչվել երկամարտի 180 կգ արդյունքով, իսկ 69 կգ քաշայինների մրցավեճի չեմպիոնուհի Նազիկ

Ավդալյանը ցույց էր տվել 190 կգ արդյունք:

Թեթեւ քաշային կարգերում ուժեղագույնը ճանաչվեցին Մարգարիտա Ղազարյանը (48 կգ)՝ 94 կգ եւ Իզաբելա Յայլյանը (53 կգ)՝ 163 կգ: 75 կգ-ից բարձր քաշային կարգում պատրաստվում էր ելույթ ունենալ մեր անվանի ծանրոցուհի Հռիփսիմե Խուրշուդյանը, սակայն նա մարզումների ժամանակ վնասվածք էր ստացել ու չկարողացավ մրցահարթակ դուրս գալ: Նրա բացակայության պայմաններում հաջողությունն ուղեկցեց Նաիրա Հարությունյանին, որը երկամարտում ցույց տվեց 210 կգ արդյունք:

Կանանց այս տարվա առաջնությունը մասնակիցների թվով ռեկորդային էր: Մրցահարթակ դուրս եկան 27 մարզուհիներ: Այս փաստն ուրախացրել էր Հայաստանի կանանց հավաքականի մարզիչ Արշաուեն Ներսիսյանին, որի կարծիքով տարիներ անց քանակը որակ կաղահովի: Նա ընդհանուր առմամբ գոհ էր մրցումների արդյունքներից, նշելով, որ այս ժամանակահատվածի համար բարձր ցուցանիշներ չէր ակնկալում:

Ինչ վերաբերում է ապրիլին կայանալիք Եվրոպայի առաջնությանը, ապա մարզչի կարծիքով Հայաստանը Կազանում կներկայացնեն Էլեն Գրիգորյանը, Մելինե Դալուզյանն ու Հռիփսիմե Խուրշուդյանը: Նազիկ Ավդալյանի հարցում մարզիչները չեն ցանկանում ռիսկի դիմել, ուստի կսպասեն վերջինիս լրիվ ապաքինմանը: Նազիկը մեր հավաքականին շաս է անհրաժեշտ Փարիզում կայանալիք աշխարհի առաջնությունում, որտեղ խաղարկվելու են Լոնդոնի ամառային օլիմպիադայի ուղեգրեր: Անցյալ տարվա աշխարհի առաջնությունում մեր կանանց հավաքականն իր հաջող ելույթների շնորհիվ առայժմ հավակնում է օլիմպիադայում առավելագույնին՝ 4 մարզուհիների մասնակցության: Այս տարի պետք է ձգտել պահպանել նվաճած դիրքերը: Աշխարհի առաջնությունում մեր հավաքականը հանդես կգա լրիվ կազմով՝ 5 հոգով: Հավանաբար Նազիկ Ավդալյանն ու Մելինե Դալուզյանը հանդես գան միեւնույն՝ մինչեւ 69 կգ քաշային կարգում:

Անվանիները հաստատեցին իրենց բարձր կարգը

Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական ֆոլեջում իրենց մրցավեճն ավարտեցին ծանրամարտի Հայաստանի տղամարդկանց առաջնության պարգեւները վիճարկող ծանրոցները: Թեեւ առաջատար մի քանի ծանրոցների բացակայությանը, առաջնությունն անցավ բավական հետաքրքրական մրցապայքարում: Առաջնությանը մասնակցած մեր մյուս անվանի ծանրոցները հաստատեցին իրենց բարձր կարգը:

Իր համար քաշային նոր կարգում՝ մինչեւ 62 կգ ծանրոցների մրցավեճում հաջող հանդես եկավ մեծահասակների Եվրոպայի փոխչեմպիոն, 17-ամյա Սմբատ Մարգարյանը: Նա երկամարտի 258 կգ (113+145) արդյունքով հռչակվեց ՀՀ չեմպիոն ու պարգեւատրվեց ոսկե մեդալով եւ 30 հազար դրամով:

Իր բարձրության վրա էր նաեւ Եվրոպայի չեմպիոն Գեւորգ Պողոսյանը, որը եւս վստահ հանդես եկավ քաշային նոր կարգում: Մինչեւ 105 կգ քաշային ծանրոցների մրցավեճում Պողոսյանը երկամարտի 395 կգ (180+215) արդյունքով ուժեղագույնը ճանաչվեց:

Բավական հետաքրքրական պայքար էր ծավալվել հատկապես գերծանրքաշայինների մրցավեճում: Այստեղ չեմպիոնի կոչման հավակնորդներն էին ՀՀ կրկնակի գավաթակիր Արթուր Բաբայանն ու երիտասարդների Եվրոպայի չեմպիոն Հայկ Հակոբյանը: Հաջողությունն ուղեկցեց Արթուր Բաբայանին, որը հաղթող ճանաչվեց երկամարտի 405 կգ (185+220) արդյունքով: Արծաթե մեդալը բաժին հասավ Հայկ Հակոբյանին, որը չեմպիոնին զիջեց 10 կգ-ով: Երկամարտի 377 կգ (172+205) արդյունքով բրոնզե մրցանակակիր դարձավ Սինգապուրի պատանեկան ամառային օլիմպիադայի փոխչեմպիոն Գոռ Մինասյանը:

Մինչեւ 56 կգ քաշային կարգում չեմպիոնի տիտղոսը նվաճեց Ժորժ Եղիկյանը՝ 225 կգ (100+115): Մինչեւ 69 կգ քաշայինների մրցավեճի ելքը վճռեց ծանրոցների անձնական քաշը: Վանիկ Ավետիսյանն անձնական ավելի թեթեւ քաշի շնորհիվ դարձավ հաղթող երկամարտի 321 կգ (140+181) արդյունքով՝ գերազանցելով Սամվել Գրիգորյանին:

Մինչեւ 77 կգ քաշային կարգում ոսկե մեդալի արժանացավ Նորայր Տոնոյանը՝ 325 կգ (135+190): Մինչեւ 85 կգ ծանրոցների մրցավեճն ավարտվեց էջմիածնի ներկայացուցիչ Գոռ Հարությունյանի հաղթանակով: Նա երկամարտում ցույց տվեց 320 կգ (150+170) արդյունք: Իսկ քաշային հաջորդ կարգում (մինչեւ 94 կգ) ուժեղագույնը Էդգար Գեւորգյանն էր՝ 370 կգ (170+200):

Մրցումների արդյունքներով կկազմավորվի Հայաստանի ծանրամարտի տղամարդկանց հավաքականը, որը կշարունակի նախապատրաստվել ապրիլին Կազանում կայանալիք Եվրոպայի առաջնությանը: Ըստ ծանրամարտի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Սամվել Խաչատրյանի, Եվրոպայի առաջնությունում մեր հավաքականը հիմնականում երիտասարդական կազմով է հանդես գալու: Մեր ծանրոցների համար մրցաշրջանի կարեւորագույն մրցումը լինելու է նոյեմբերին Փարիզում կայանալիք աշխարհի առաջնությունը, որը նաեւ վարկանիշային է: Այնտեղ խաղարկվելու են Լոնդոնի 2012-ի ամառային օլիմպիական խաղերի ուղեգրեր:

«Փյունիկը» զիջեց «Ստալին»

Թուրքիայի Բելեկ քաղաքում ուսումնամարզական հավաքն է շարունակում «Փյունիկը», որը հերթական խաղում 0-2 հաշվով զիջեց Ալչեւսկի «Ստալին»: Այդ խաղին փյունիկցիների կազմում մասնակցեց ֆրանսիացի պաշտպան Նիկոլաս Դեսենֆլոսը, որը վերջերս է փոխաշրջան անցնում թիմում:

Օրերս «Փյունիկին» է միացել նաեւ ռուս դարպասապահ Սերգեյ Բարսուկովը, որը եւս փոխաշրջան կանցնի: ՀՀ չեմպիոնը դարպասապահի կարիք ունի, քանի որ անցած մրցաշրջանում թիմի դարպասը պաշտպանած Արթուր Լեսկոն առաջնության ավարտից հետո տեղափոխվեց «Մինսկ», իսկ 2-րդ դարպասապահ Էդուարդ Հովհաննիսյանը տրանսֆերի հանվեց եւ այժմ գտնվում է «Ուլիսում»:

«Փյունիկը» մարտի 2-ին իր վերջին հանդիպումը կանցկացնի Ուլյանովսկի «Վոլգայի» հետ եւ կվերադառնա Երեւան: Մարտի 6-ին ՀՀ չեմպիոնը հոբելյանական՝ 20-րդ առաջնության մեկնարկային խաղում Իջեւանում ուժերը կչափի «Իմպուլսի» հետ:

ՅՅՈՒԴՈ

Արմեն Նազարյանն արժանացավ ոսկե մեդալի

Ջյուդոյի աշխարհի գավաթի խաղարկության հերթական փուլն անցկացվեց Վարշավայում, որտեղ 6 հայ ձյուդոյիստներից երկուսը դարձան մրցանակակիրներ:

Բոլորից հաջողը մինչեւ 66 կգ քաշային Արմեն Նազարյանի ելույթն էր: Հրազդանցի ձյուդոյիստը փայլուն ելույթ ունեցավ: Հաղթելով բոլոր մրցակիցներին, Արմենը նվաճեց չեմպիոնի տիտղոսը: Նրա մրցակիցներն էին ֆինն Անթի Ռինտամակին, ռուսաստանցի Մախմիտ Կուզնեցովը, ֆրանսիացի Դավիթ Լարոսեն, մոնղոլ Միյարագիա Սանջասուրենը եւ լեհ Պավել Զագրոդնիկը: Այս հաղթանակի շնորհիվ Արմեն Նազարյանը վարկանիշային 100 միավոր վաստակեց:

Մինչեւ 60 կգ քաշային կարգում Հովհաննես Դավթյանը դարձավ արծաթե մրցանակակիր՝ միայն եզրափակիչում պարտվելով անգլիացի Էշլի Մաթենզիին: Իսկ մինչեւ եզրափակիչ հասնելը նա հաղթել էր ադրբեջանցի Վուղար Շիրինլիին, ֆրանսիացի Բապտիստ Լերոյին, էստոնիան ներկայացնող Էլնուր Ալիեւին, բրազիլացի Բրենո Ալվեսին եւ Իսրայելի դրոշի ներքո հանդես եկած Արտյոմ Արշանսկուն: Դավթյանը վարկանիշային 60 միավոր վաստակեց:

Հաջող կարելի է համարել մինչեւ 100 կգ քաշային կարգում Հակոբ Առաքելյանի ելույթը, որը 3 գոտեմարտում հաղթելուց հետո պարտվեց Հասան Ազոունին եւ իրավունք ստացավ պայքարելու բրոնզե մեդալի համար: Սակայն մրցանակակիր դառնալ չհաջողվեց: Հայ ձյուդոյիստը զիջեց ռուսաստանցի Ռոման Պոլոսինին եւ գրավեց 7-րդ տեղը՝ վաստակելով վարկանիշային 16 միավոր: Ռոբերտ Վարդանյանն էլ (73 կգ) 2 հաղթանակից հետո զիջեց մոնղոլ ձյուդոյիստին ու դուրս մնաց հետագա պայքարից: Նա վաստակեց 12 միավոր:

Ընդհանուր թիմային հաշվարկով ՀՀ հավաքականը գրավեց 2-րդ տեղը ֆրանսիացիներից հետո:

Դանիելյանի դիրքերն անսասան են

Դոհայում ընթացող շախմատի կանանց Գրան պրիի խաղարկությունում հաջող ելույթներն է շարունակում Էլինա Դանիելյանը, որը 6 տուրից հետո վաստակած 5,5 միավորով վստահորեն գլխավորում է աղյուսակը: 5-րդ տուրում Էլինան շարունակեց հաղթարշավը՝ պարտության մատնելով Սյու Յուհուային: Դժվար է ասել, թե կհաջողվե՞ի որեւէ մեկին կանգնեցնել Դանիելյանի հաղթարշավը, եթե 6-րդ տուրում Էլինայի մրցակիցը չլիներ Լիլիթ Մկրտչյանը: Ինչպես կանխատեսվում էր, հայ շախմատիստուհիների մրցավեճը 32-րդ քայլին ավարտվեց ոչ-ոքի: Այսպիսով, Դանիելյանը մրցաշարում անդրանիկ կես միավորը կորցրեց:

Իսկ ահա Լիլիթ Մկրտչյանին առայժմ չի հաջողվում հաղթանակի փաղցրությունը վայելել: 5-րդ տուրում իր հետ աղյուսակը եզրափակող Բատսյագ Մոնգոնտուլի հետ պարտիայում Լիլիթը հաշտություն կնքեց: 6 հնարավորից վաստակած 2 միավորով Մկրտչյանը Չժու Չենի, Սյու Յուհուայի եւ Անտուանետա Ստեֆանովայի հետ բաժանում է 9-12-րդ տեղերը:

Էլինա Դանիելյանից 1,5 միավորով հետ են մնում 2-3-րդ տեղերը բաժանող Մարի Սեբագն ու Պիա Կրամլինգը: Սեբագը նախ ոչ-ոքի խաղաց Համպի Կոներուի հետ, ապա հաղթեց Մարթա Ֆիեռոյին: Կրամլինգը պարտության մատնեց Նանա Զագնիձեին ու Անտուանետա Ստեֆանովային: 3,5 միավոր ունի Համպի Կոներուն, 3-ական՝ Նանա Զագնիձեն ու Մարթա Ֆիեռոն:

Այսօր կայանալիք 7-րդ տուրում Էլինա Դանիելյանը սպիտակներով կմրցի Չժու Չենի, իսկ Լիլիթ Մկրտչյանը սեւերով կխաղա Սյու Յուհուայի հետ:

«Գանձասարին» զրկեցին գավաթից

«Թուրքմենբաշու գավաթի» խաղարկությունում հաջող մրցելույթներ ունեցող Կաղանի «Գանձասարին» տեղի մրցավարները թույլ չտվեցին մրցաշարի հաղթող ճանաչվել: Կիսաեզրափակիչում 11մ հարվածներով հաղթելով (7-6) Թուրքմենստանի չեմպիոն ու գավաթակիր «Նեբիտչիին» (հիմնական եւ լրացուցիչ ժամանակում դարպասները մնացել էին անառիկ), կաղանցիները մտել էին եզրափակիչ, որտեղ մրցեցին տեղի «Ալթին Ասիրի» հետ: Այդ թիմին խմբային մրցաշարում «Գանձասարը» հաղթել էր 1-0 հաշվով:

Ծանոթ լինելով հայկական թիմի ներուժին, որը մինչեւ եզրափակիչ հանդիպումը դարպասն անառիկ էր պահել, մրցաշարի կազմակերպիչները ամեն ինչ արեցին, որպեսզի գավաթը մնա Թուրքմենստանում: Խաղի օրը հայտնի դարձավ, որ «Գանձասարի» առանցքային ֆուտբոլիստներ Արթուր Քոչարյանն ու Գորան Օբրադովիչը որակազրկված են եւ իրավունք չունեն մասնակցելու վճռորոշ հանդիպմանը: Այնուհետեւ իրենց «սեւ» գործը կատարեցին մրցավարները, որոնք 3 11մ հարված նշանակեցին «Գանձասարի» դարպասին, որոնցից երկուսն անվրեպ իրացնելով, «Ալթին Ասիրը» հաղթեց 2-1 հաշվով (կաղանցիներից գոլի հեղինակ դարձավ Վահե Դավթյանը) ու դարձավ գավաթակիր:

«Գանձասարը» 2-րդ տեղը գրավելու համար պարգեւատրվեց 10 հազար դոլարով: Կաղանցիները 4-րդ անգամ մասնակցեցին «Թուրքմենբաշու գավաթի» խաղարկությանը:

Տիգրան Քոթանջյանը հաջող է մեկնարկել

Իրանի Մեշհեդ քաղաքում ընթացող շախմատի մրցաշարում հաջող է մեկնարկել Հայաստանի միակ ներկայացուցիչ Տիգրան Քոթանջյանը: Անցկացված 3 պարտիաներում էլ նա հաղթել է եւ 23 շախմատիստների հետ 3 միավորով գլխավորում է աղյուսակը: Մեկնարկում Տիգրանի մրցակիցներն իրանցի շախմատիստներն էին՝ Մուստաֆա Ամերին, Մաջիդ Բագիերին եւ Սահեբալի Աթանեջհադը: 4-րդ տուրում եւս հայ շախմատիստը կմրցի իրանցու՝ Ալի Աբեդիի հետ:

Ընտրվեցին Սոչիի օլիմպիադայի թալիսմանները

Ընձառյուծը, սպիտակ արջն ու նապաստակն ընտրվել են 2014-ին Սոչիում կայանալիք ձմեռային օլիմպիադայի թալիսմաններ: Քվեարկության արդյունքներն ուղիղ եթերով հայտարարվել են Ռուսաստանի հեռուստատեսությամբ: Բոլորից շատ ձայն է հավաքել Բարսիկ անունով ընձառյուծը, որի օգտին քվեարկել է մասնակիցների 28 տոկոսը, այդ թվում նաեւ ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինը: Սպիտակ արջի օգտին քվեարկել է մասնակիցների 18 տոկոսը: 16 տոկոս ձայն է ստացել նապաստակը: Նշենք, որ միանգամից երեք թալիսման ունենալը բնավ էլ ռեկորդ չէ: Օրինակ, 2008-ի Պեկինի ամառային օլիմպիադան 5 թալիսման ուներ:



Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

Գլխավոր «Օսկարը» ընտրվեց «Արան խոսում է» ֆիլմին

Ամերիկյան կինոակադեմիայի «Օսկար» մրցանակների շնորհման 83-րդ արարողությունը նախորդ օրը տեղի է ունեցել Լոս Անջելեսի «Կոդակ» հանդիսասրահում: «Տարվա լավագույն ֆիլմ» կոչման համար պայքարում էին «Արան խոսում է», «Սեւ կարապ», «Մարտիկ», «Երեխաները լավ են», «127 ժամ», «Խաղալիքների պատմություն-3», «Երկաթյա գործելաձեւ», «Ձմեռային ոսկոր», «Սկիզբ» եւ «Սոցիալական ցանց» ֆիլմերը:

Լավագույն ֆիլմ է ճանաչվել եւ գլխավոր «Օսկարին» արժանացել Թոմ Հուփերի «Արան խոսում է» ֆիլմը: Հուփերը ճանաչվել է լավագույն բեմադրիչ:

Ֆիլմը կակազության դեմ պայքարող բրիտանացի միապես Գեորգ 6-րդի մասին է եւ հաղթող է ճանաչվել նաեւ «Լավագույն յուրօրինակ սցենար» անվանակարգում, իսկ գլխավոր դերակատար Քոլին Ֆերտը ճանաչվել է «լավագույն դերասան»:

Լավագույն օտարերկրյա կինոնկար է ճանաչվել դանիական «Վրեժ» ֆիլմը (բեմադրիչ՝ Սյուզան Բիր): «Լավագույն դերասանուհի» անվանակարգում հաղթել է Նատալի Պորտմանը՝ «Սեւ կարապ» ֆիլմում իր դերակատարման համար:

«Սոցիալական ցանց» ֆիլմի հիմնական երաժշտությունը որպես այդպիսին լավագույնն է ճանաչվել՝ «Օսկարի» արժանացնելով հեղինակներ Թրենտ Ռեզնորին եւ Աստիկուս Ռոսսին:

Տախտակ հայ վարորդին կասկածում են գերմանացուն թունավորելու մեջ

Գերմանական մի շարք էլեկտրոնային լրատվամիջոցներ՝ SZ-online, europe-online, Bild-ը հինգշաբթի՝ փետրվարի 24-ին փոխանցել են, թե Մոսկվայի իրավապահները կալանավորել են տախտակ 43-ամյա մի վարորդի, որ Հայաստանի քաղաքացի է, նրան կասկածելով 2010-ին 27-ամյա մի գերմանացու թունավորելու մեջ: Ինտերֆախի փոխանցմամբ, վարորդը թմրեցուցիչ է խառնել կոկտեյլին, հրամցրել նրան, այնուհետեւ կողոպտել գերմանացուն ու թողել փողոցում:

Հերձմամբ հաստատվել է, որ Մոսկվայի գերմանական ֆիրմաներից մեկի 27-ամյա աշխատակիցը մահացել է թունավորումից: Ինչպես ծանուցում է գերմանական DPA գործակալությունը, գործը գտնվում է Գերմանիայի դաշնային քրեական վարչության ուշադրության կենտրոնում:

Ան. Հ.

Գերմանիա

Նոր վարչապետ Թունիսում

Թունիսի ժամանակավոր ղեկավար Մեբազաայի հրամանագրով երկրի վարչապետ է նշանակվել Բեջի Կայիդ Էսեբսին: Ֆրանսպրեսը նշում է, որ 84-ամյա Էսեբսին 1981-1986 թթ. զբաղեցրել է Թունիսի արտգործնախարարի պաշտոնը: Եղել է նաեւ պաշտպանության նախարար եւ խորհրդարանի նախագահ: Համարվում է ազատական քաղաքականության կողմնակից:

Կիրակի օրը ստիպված հրաժարական էր տվել վարչապետ Մոհամմեդ Գաննուչին, որը Թունիսի ժամանակավոր կառավարության ղեկավարն էր հունվարի կեսերից՝ նախագահ Բեն Ալիի տապալումից ի վեր: Հրաժարականի պատճառը մայրաքաղաք Թունիսում շարունակվող բողոքի զանգվածային ցույցերն էին, որոնց մասնակիցները պահանջում են Բեն Ալիի հետ կապված իշխանավորների հրաժարականը: Գաննուչին վարչապետի պաշտոնն զբաղեցնում էր նաեւ Բեն Ալիի օրոք եւ նրա դաշնակիցներից մեկն էր:

Պաշտոնական տվյալների համաձայն, փետրվարի 26-ի բողոքի ցույցի ցրման ժամանակ սպանվել է 5 մարդ, վիրավորվել է անվտանգության ուժերի 16 աշխատակից:

Կոչնագիր

Առ Մելանի Մարտին Տէր Յարութիւնեան.

Լիբանանի Հայոց դասաստանական խորհուրդը սոյն յայտարարութեան հրապարակումին յաջորդող մէկ ամսուան ընթացքին ձեզ կը հրաւիրէ անձամբ կամ փոխանորդին միջոցով ներկայ գտնուելու կայանալիք իր նիստին, ուր պիտի քննուի մեր ընտանեկան հարցը:

Վայր՝ Ազգ. Առաջնորդարանի շէնք, Ա. յարկ:

ԴԻՒԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

Կոչնագիր

Առ Գոհար Մարտին Տէր Յարութիւնեան.

Լիբանանի Հայոց դասաստանական խորհուրդը սոյն յայտարարութեան հրապարակումին յաջորդող մէկ ամսուան ընթացքին ձեզ կը հրաւիրէ անձամբ կամ փոխանորդին միջոցով ներկայ գտնուելու կայանալիք իր նիստին, ուր պիտի քննուի մեր ընտանեկան հարցը:

Վայր՝ Ազգ. Առաջնորդարանի շէնք, Ա. յարկ:

ԴԻՒԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

Հաստատված է
Տնօրեն՝
Աուդիտոր՝
22/02/2011 թ.

«Էյ-Էֆ-Ջի Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից
Ռ. Խաչատրյան
Ռ. Խաչատրյան

Ձեւ N1

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
առ 01. 01. 2011 թ.

		ծածկագիրը
Կազմակերպության անվանումը	«Փորֆիկ Քնարիկ» ՍՊԸ	
Փաստացի գործունեություն	Դրամ. շահ. խաղ. սպ. կազմակերպում	
հիմնական երկու տեսակները		
Պետռեգիստրում գրանցման համարը		26911001972
Հարկ վճարողի հաշվառման համարը		02223337
Չափի միավորը		հազ. դրամ
Գտնվելու վայրը	Գ. Լուսավորիչ 12/3	

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ	030	9583	8333
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	9583	8333
II. Ընթացիկ ակտիվներ			
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	61	35
Այլ դեբիտորական պարտքեր	180	342	24
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	-	1
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	403	60
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	9986	8393

ՊԱՍՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումար	240	50	50
Կուտակված շահույթ	270	(80586)	4053
Ընդամենը սեփական կապիտալ	300	(80536)	4103
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ	310	90522	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	90522	-
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	-	4290
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	-	4290
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	9986	8393

Ձեւ N2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
01.01.2011 թ.,

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	95372	204956
Համախառն շահույթ (վնաս)	030	95372	204956
Իրացման ծախսեր	040	(15591)	(27594)
Վարչական ծախսեր	050	(1822)	(1820)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	77959	175542
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում	080	(77539)	(61105)
	081	77539	(61105)
	082	-	2000
Գործառնական շահույթ (վնաս)	090	420	112437
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	420	112437
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	420	112437
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	420	112437

Ղեկավար *Է. Հովհաննիսյան*

Հաստատված է
Տնօրեն՝
Աուդիտոր՝

«Էյ-Էֆ-Ջի Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից
Ռ. Խաչատրյան
Ռ. Խաչատրյան
22/02/2011 թ.

Ձեւ N1

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ
առ 01. 01. 2011 թ.

		ծածկագիրը
Կազմակերպության անվանումը	«Ղարախան Փլեյ» ՍՊԸ	
Փաստացի գործունեություն	Դրամ. շահ. խաղ. սպ. կազմակերպում	
հիմնական երկու տեսակները		
Պետռեգիստրում գրանցման համարը		27111003479
Հարկ վճարողի հաշվառման համարը		01401688
Չափի միավորը		հազ. դրամ
Գտնվելու վայրը	ՀՀ, ք. Երեւան, Դավթաշեն 3 թ. 13/65	

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ	030	-	2084
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	-	2084
II. Ընթացիկ ակտիվներ			
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	137	141
Այլ դեբիտորական պարտքեր	180	25	33
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	53	518
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	215	692
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	215	2776

ՊԱՍՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումար	240	50	50
Կուտակված շահույթ	270	(12555)	3
Ընդամենը սեփական կապիտալ	300	(12505)	53
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր եւ փոխառություններ	310	10054	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	10054	-
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	2572	2586
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով	420	94	137
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	2666	2723
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	215	2776

Ձեւ N2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
առ 01.010.2011 թ.,

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)
1	2	3	4
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	26804	59228
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	(5000)	(2916)
Համախառն շահույթ (վնաս)	030	21804	56312
Իրացման ծախսեր	040	(4238)	(8791)
Վարչական ծախսեր	050	(1477)	(1499)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	16089	46022
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում	080	(23144)	(30000)
		(23144)	(30000)
Գործառնական շահույթ (վնաս)	090	(7055)	16022
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	(7055)	16022
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	(7055)	16022
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	(7055)	16022

Ղեկավար *Ա. Ղարախանյան*

24 փետրվարի, 2011 թ.

Հաշվետվություն

«Գևորգ Ա. Մոմջյան» բարեգործական հիմնադրամի 2010 թ. գործունեության մասին

«Գևորգ Ա. Մոմջյան» բարեգործական հիմնադրամը հաշվետու ժամանակահատվածում որպես միջնորդ կազմակերպություն անմիջական կապ է ստեղծել սփյուռքահայ բարերարների և տեղական իշխանությունների ու կազմակերպությունների միջև, ինչի արդյունքում.

- Ավարտին է հասցվել «Հայ և արաբ ժողովուրդների երախտիքի ու բարեկամության հուշարձանի» կառուցումը: Պաշտոնական բացումը նախատեսվում է ս.թ. մայիսին: Հիմնադրամը լիազորված էր հանդես գալ որպես պատվիրատու:

Ձեռք է բերվել և նվիրվել է.

- Նորքի մանկական տանը և Գյումրիի ծննդատանը՝ 600 ձեռք ընտիր բամբակյա սպիտակեղեն:
- Գյումրիի «Անի» հիմնարկի, մանկուց հաշմանդամ, երեխաներին՝ 52 տաք վերմակներ և նույնքան գլխարկ:
- Գյումրիի մարզադպրոցին՝ 2 կոմպլեկտ սպորտային հագուստ:
- Սահմանամերձ Ղազանչի գյուղի դպրոցին և Ստեփանավանի քաղաքային գրադարանին՝ 430 հատոր գիրք:
- Գյումրիի երկու, Սպիտակի, Վանաձորի, Գավառի մանկատներին ու Ստեփանավանի մշակութային տանը՝ Թումանյանի հեքիաթները DVD-ներով, այդ թվում և ռուսերեն ու անգլերեն լեզուներով:

Ֆինանսավորումը կատարվել է սփյուռքահայ անհատ բարերարների կողմից անմիջականորեն:

Հիմնադրամի հիմնադիրներն են Հայաստանի քաղաքացիներ Ռոմեն Կոզմոյանը և Աշոտ Շաբոյանը:

Հիմնադրամի ստեղծման պահից առ այսօր հիմնադիրների կողմից ներդրում չի կատարվել:

Հիմնադրամը չունի սկզբնական գույք:

Հաշվետու ժամանակաշրջանի համար հարկային մարմին ներկայացված շահութահարկի պարզեցված հաշվարկը զրոյական է:

«Գևորգ Ա. Մոմջյան» բարեգործական հիմնադրամի Նախագահ՝ ***Ռոմեն Կոզմոյան***

Հայտարարություն

Հարգելի՛ կենսաթոշակառուներ

Տեղեկացնում ենք, որ կենսաթոշակները Երեւանում կսկսեն վճարվել մարտի 2-ից:

Մարտի 2-ից մինչեւ մարտի 5-ը ներառյալ կենսաթոշակները կվճարվեն «Հայփոստի» փոստային բաժանմունքներից՝ ժամը 9:00-ից մինչեւ 20:00: Մարտի 9-ից սկսած, ժամը 9:00-ից 16:00-ն կենսաթոշակները կառաքվեն տուն՝ փոստատարի միջոցով, իսկ 16:00-ից մինչեւ 19:00-ն կվճարվեն փոստային բաժանմունքներում:

Դժգոհություններ եւ առաջարկություններ դեպքում խնդրում ենք զանգահարել թեժ գծի հեռախոսահամարներով՝ 514-666, 514-667:

«Հայփոստ» ՓԲԸ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 28.2.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: